

1523

Պրոլետարներ բոլոր  
յիշկըների, միացե՛ց



Վ. Ի. Լ Ե Ն Ի Ե

ՀՈԴՎԱԾՆԵՐ  
ՇՈՒԿԱՆԵՐԻ ԹԵՌԻԱՅԻ  
ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,

3123  
2-73

Կ Պ Ի Ա Հ Բ Ա Տ

1934

Ց Ե Բ Ի Վ Ա Ն

03 NOV 2009  
26 MAY 2005

3K23  
Z-73

ԱՐ.

ՊՐԵԼԵԿՄԱՆԻՆԻ ՊՐԵԼԵԿ ՅԵԼԿՈՒՆԵՐԻ, ԺԼՄՈՂԵՔ

Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

ՀՅԴՎԵԾՆԵՐ

ՇՈՒԿԱՆԵՐԻ ԹԵՂՈՐԻՑՅ

ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 285<sup>թ</sup> թագմ. Լ. Ա. ԹՈՎՅԱՆ  
ԽՄԲ. Ա. Ա. ԴՈՅՈՆ

10.09.2013

7523

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ  
ՇՈՒԿԱՆԵՐԻ ԹԵՌԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
(Պ.պ. Տաւգան. Բարանովիսի և Բալգակովի բանավեճի  
առքիվ)

Կապիտալիստական հասարակության մեջ շուշաների հարցը, ինչպես հայտնի յե, չափազանց կարեոր տեղ եր գրավում եկոնոմիստ-նարոդնիկների ուսմունքի մեջ՝ պար վազի և նունի գլխավորությամբ։ Ուստի և բոլորովին բնական ե, վոր եկոնոմիստները, վորոնք բացասաբար են վերաբերվում նարոդնիկների թեորիաներին, անհրաժեշտ համարեցին ուշադրություն դարձնել այդ հարցին և պարզել ամենից առաջ «շուկաների թեորիայի» հիմնական, արստրակտ-թեորետիկ կետերը։

Այս պարզաբանման փորձը 1894 թվականին կատարեց պ. Տուդան-Բարանովսկին իր «Промышленные кризисы в современной Англии» («Արդյունաբերական ճգնաժամերը Ժամանակակից Անգլիայում») գրքում, յերկրորդ մասի գլ. I — «Շուկաների թեորիան», իսկ հետո անցյալ տարի պ.

3.886 55  
B. I. LENIN

Статья по вопросу о теории рынков  
ПАРТИЗДАТ 1934 ЭРИВАНЬ



Բուլգակովը հենց նույն հարցին նվիրեց իր «Օ  
 րանքակովը համար կապատճեն արտա-  
 («Շուկաների մասին՝ կապիտալիստական արտա-  
 գրության որով») գիրքը (Մոսկվա 1897 թ.): Յեր-  
 կու հեղինակն ել հիմնական հայեցակետերում  
 իրար գտել են, յերկուսի մոտ ել ծանրության կենտ-  
 րոնն այն ե, զոր նրանք շարադրում են «ամբողջ  
 հասարակական կապիտալի շրջանառության ու վե-  
 րաբտադրության» նշանավոր վերլուծությունը,  
 վերլուծություն, զոր Մարքսն ե ավել «Կապիտալի»  
 յերկրորդ հատորի III բաժնում: Յերկու հեղինակն  
 ել համաձայնել են այն բանում, զոր կապիտալիստա-  
 կան հասարակության միջի (հատկապես ներքին)  
 շատ մասին պատր վակով և նույնի թեորիա-  
 շուկայի մասին պատր վակով և նույնի թեորիա-  
 ներն անսպայման սխալական են և հիմնված են  
 Մարքսի վերլուծությունը կամ անգիտանալու կամ  
 չհասկանալու վրա: Յերկու հեղինակն ել ընդու-  
 նել են, զոր զարգացող կապիտալիստական արտա-  
 գրությունը ինքն իր համար շուկա յետեղում  
 պատրաստական արտադրյան միջոցների յեւ  
 գլխավորապես արտադրյան մասնավորապես գեր-  
 լնդհանրապես արդյունքի և մասնավորապես գեր-  
 արժեքի իրացումը լիովին բացատրելի յետ  
 առանց արտաքին շուկայի ներգրավման: զոր կապի-  
 տալիստական յերկրի համար արտաքին շուկայի  
 անհրաժեշտությունը բղխում ե բնավ փոչ իրաց-

ման պայմաններից (ինչպես յենթադրում ելին  
 պատր վակով և նույնը), այլ պատմական պայ-  
 մաններից և այլն: Թվում ե թե նման լիակա-  
 տար համաձայնության դեպքում պատր Բուլգակովին  
 ու Տուգան-Բարանովսկին վիճելի բան պետք ե  
 չունենան, և նրանք կարող են իրենց ուժեղը միա-  
 տեղ ուղղել նարունիկական եկանոմիայի ավելի  
 մանրամասն և հետագա քննադատությանը: Բայց  
 իրոք հիշված գրողների միջև բանավեճ ե սկսվել  
 (Բուլգակով, հիշվուածու, եջ 246—257 և passim),  
 Տուգան-Բարանովսկի «Միք ճոյ.»-ում 1898 թ.  
 № 6: «Կապիտալիզմ և շուկա», Ս. Բուլգակովի  
 գրքի առթիվ): Մեր կարծիքով, թե պատր Բուլգա-  
 կովը, թե պատր Տուգան-Բարանովսկին մի քիչ հե-  
 տուն են գնացել իրենց բանավեճում, իրենց նկա-  
 տաւմներին չափազանց անձնական բնույթ տալով:  
 Փորձենք վերլուծել՝ կամ արդյոք նրանց միջև իրա-  
 կան տարածայնություն և յեթե կա, ապա նրան-  
 ցից ովկ ե ավելի իրավացի:

Ամենից առաջ պատր Տուգան-Բարանովսկին  
 պատր Բուլգակովին մեղադրում ե, զոր նա «նվազ  
 որիկինալ» և և շատ ե սիրում յurare in verba  
 magistri\* („Մ. 6.», 123): «Կապիտալիս-  
 տական յերկրի համար արտաքին շուկայի

\*— յերդվել ուսուցչի խոսքերով: Խմբ.:

գերի հարցի իմ շարադրած լուծումը, վոր պ.Բուլգակովն ամբողջովին ընդունում ե, Մարքսից չի վերցրած բնագա», — հայտարարում ե պ. Տուգան-Բարանովսկին: Մեզ թվում ե, թե այդ հայտարարությունը ճիշտ չե, վորովհետեւ պ. Տուգան-Բարանովսկին հարցի լուծումը վերցրել ե ինց Մարքսից. անշուշտ այնտեղից ել վերցրել ե և պ. Բուլգակովը, այնպես վոր վեճ կարող ե լինել վոչթե «որիգինալության» մասին, այլ Մարքսի այս կամ այն դրույթը հասկանալու, Մարքսին այսպես կամ այլ կերպ շարադրելու անհրաժեշտության մասին: Պ. Տուգան-Բարանովսկին ասում ե, թե Մարքսը «II հատորում բոլորովին չի շոշափում արտաքին շուկայի հարցը» (I. c.)։ Այդ ճիշտ չե: Յերկրորդ հատորի հենց նույն (III) բաժնում, վորի մեջ շարադրված ե արդյունքի իրացման վերլուծությունը, Մարքսը միանգամայն վորոշակի պարզում ե արտաքին առևտի, հետևաբար նաև արտաքին շուկայի այդ հարցի հանդեպ վերաբերմունքը: Ահա թե ինչ ե ասում նա այդ մասին:

«Կապիտալիստական արտադրություն առհասարակ գոյություն չունի առանց արտաքին առևտի: Բայց յեթե յենթադրել տվյալ չափերով տարեկան նորմալ վերաբերություն, ապա դրանով արդեն յենթադրվում ե, վոր ար-

տաքին առևտուրը բնաշխարհիկ ժինվածքները (Artikel—ապրանքները) միայն փոխարինում ե ուրիշ սպառողական կամ բնական ձեվի ժինվածքներով, չըշափելով վոչ արժեքի այն հարաբերությունները, վորոնց մեջ իրար հետ փոխանակում են յերկու կատեգորիաներ՝ արտադրության միջոցները և սպառման առարկաները, վոչ հարաբերություններ հաստատուն կապիտալի, փոփոխուն կապիտալի և գերարժեքի միջև, վորոնք ստացվում են այդ կատեգորիաներից յուրաքանչյուրի արդյունքի արժեքի բաժան-բաժան լինելուց: Արտաքին առևտուրը արդյունքի տարվետարի վերաբերվող արժեքի վերլուծության մեջ մտցնելը կարող ե, հետևաբար, միմիայն խճճել գործը, նոր մոմենտ չընձեռնելով վոչ բուն խնդրի համար, վոչ նրա լուծման համար: Հետևաբար բոլորովին պետք չե ուշադրության առնել այն...» («Das Kapital», II, 469: Ընդգծումը մերն ե): «Հարցի լուծումը» պ. Տուգան-Բարանովսկու կողմից—«...արտասահմանից ապրանքներ նեմուծող յուրաքանչյուր յերկրում կապիտալը կարող ե հավելուրդով լինել. այդպիսի յերկրի համար արտաքին շուկան անպայման անհրաժեշտ ե» («Արդ. ճնաժամերը», եջ 429: Մեջբ. «Ա. 6.». I. c., 121)—Մարքսի դրույթի հապարակ բառափոխությունն եւ: Մարքսն

առում ե, թե իրացումը վերլուծելիս չի կարելի  
հաշվի առնել արտաքին առևտությը, վորովիետե  
նա միայն վորոշ ապրանքներ ուրիշ ապրանքնե-  
րով ե փոխարինում: Պ. Տուգան-Բարանովսկին,  
իրացման նույն այդ հարցը քննելով («Աբդ-  
ճանաժամերի» յերկրորդ մասի գլ. I), ասում ե,  
թե ապրանքներ ներմուծող յերկիրը ուետք ե  
նույնպես ապրանքներ արտածի, այսինքն՝ ար-  
տաքին շուկա ունենա: Հարց ե ծագում՝ կարելի  
յե արդյոք դրանից հետո ասել, թե «Կարցի  
լուծումը» պ. Տուգան-Բարանովսկու կողմից՝  
«բնավ Մարքսից չի վերցրած»: Պ. Տուգան-Բա-  
րանովսկին հետո ասում ե, թե ««Կապիտալի»  
II և III հատորները ավարտված լինելուց շատ հեռու  
մի սևագիր ուրվագիծ են միայն» և վոր «այդ  
պատճառով III հատորում մենք չենք գտնում  
II հատորում յեղած նշանագոր վերլուծության  
հետևողական միայն» (մեջբ. հոդվ., 123): Այս  
պնդումն ել ճիշտ չե: Հասարակական վերաբառ-  
քության առանձին վերլուծություններից զատ  
(«Das Kapital», III, 1, 289)—պարզաբանում,  
թե հաստատուն կապիտալի իրացումն ինչ իմաս-  
տով և փոքրան «անկախ» ե անհատական սպա-  
ռումից, «մենք III հատորում գտնում ենք» մի  
հատուկ գլուխ (49-րդը՝ «Արտադրության պլա-  
ցեսի վերլուծության վերաբերյալ»), վոր նվիր-

ված ե II հատորում յեղած, նշանավոր  
վերլուծության հետևողական ներին,—մի գլուխ,  
վորի մեջ այդ վերլուծության արդյունքները  
կիրառված են կապիտալիստական հասարակու-  
թյան մեջ հասարակական յեկամտի տեսակնե-  
րին վերաբերող շատ կարևոր հարցը լուծելու:  
Վերջապես, ճիշտ նույնպես պետք ե սխալ համա-  
րել պ. Տուգան-Բարանովսկու այն պնդումը,  
թե իրը «Մարքսը «Կապիտալի» III հատորում  
տվյալ հարցի մասին բոլորովին այլ կերպ ե  
արտահայտվում», թե իրը III հատորում մենք  
«նույնիսկ գտնում ենք պնդումներ, վորոնք  
վճարականապես հերքվում են այդ վերլուծու-  
թյամբ» (մեջբ. հոդվ., 123): Պ. Տուգան-Բա-  
րանովսկին իր հոդվածի 122-րդ եջում բերում  
ե Մարքսի այդպիսի յերկու, իրեւ թե հիմնա-  
կան դոկտրինային հակասող, դատողությունն-  
երը: Ավելի մոտիկից քննենք Մարքսը  
III հատորում ասում ե. «Անմիջական շահա-  
գործման պայմանները և նրա (այդ շահագործ-  
ման) իրացման պայմանները նույնատեսակ չեն:  
Նրանք ըստ ժամանակի և տեղի վոչ միայն չեն  
համընկնում, այլև ըստ եյության աարբեր են:  
Առաջինները սահմանափակվում են միայն հա-  
սարակության արտադրողական ուժով, յերկրորդ-  
ները սահմանափակվում են արտադրության

տարբեր ճյուղերի համամասնականությամբ և հասարակության սպառողական ուժով»՝ Վորքան ավելի յի զարգանում (հասարակության) արտադրողական ուժը, այնքան ավելի նա հակասության մեջ և մտնում այն նեղ հիմքի հետ, վորի վրա յեն խարսխված սպառման հարաբերությունները» (III, 1, 226: Ռուս. Թարգմ., եջ 189): Պ. Տուգան-Բարանովսկին այդ բառերն այսպես եւ մեկնաբանում։ «Ազգային արտադրության բաշխման համամասնականությունը միայն տակավին չի յերաշխավորում արդյունքների վաճառահանման հնարավորությունը։ Սրդյունքները կարող են իրենց համար շուկա չգտնել, չնայած վոր արտադրության բախշումը համամասնական կլինի, — ըստ յերևութին այս ե Մարքսի մեջբերված բառերի իմաստը»։ Վոչ, այդ բառերի իմաստն այդ չեւ։ Վոչ մի հիմք չկա այդ բառերի մեջ II հատորում շարադրված՝ իրացման թեորիայի ինչ-վոր ուղղումը տեսնելու։ Մարքսն այստեղ արձանագրում եւ լոկ կապիտալիզմի այն հակասությունը, վոր նշված եր նաև «Կապիտալի» ուրիշ տեղերում, այն ե՝ արտադրությունն անտահման ընդլայնելու ձգտման և (ժողովրդական մասսաների պրոլետարական վիճակի հետևանքով) սահմանափակ սպառման անհրաժեշտության միջև յեղած հակասությունը»։

Պ. Տուգան-Բարանովսկին, ինարկե, չի վիճի այն բանի դեմ, վոր այդ հակասությունը նաևուկ ե կապիտալիզմին։ և քանի վոր Մարքսը նույն հատվածում նշում ե այդ հակասությունը, — մենք վոչ մի իրավունք չունենք ելի ինչ-վոր հետագա իմաստ փնտուելու նրա խոսքերի մեջ։ «Հասարակության սպառողական ուժ» և «արտադրության տարբեր ճյուղերի համամասնականություն» — սրանք բնուվ ինչ-վոր առանձին, ինքնուրույն, մեկը մյուսի հետ չկապված պայմաններ չեն։ Ընդհակառակը, սպառման վորոշ դրությունը համամասնականության տարբերից մեկն ե։ Իրոք, իրացման վերլուծությունը ցույց տվեց, վոր կապիտալիզմի համար ներքին շուկայի գոյացումը կատարվում ե վոչ այնքան սպառման առարկաների հաշվին, վորքան արտադրության միջոցների հաշվին։ Այստեղից հետևում ե, վոր հասարակական արտադրանքի առաջին ստորաբաժնումը (արտադրության միջոցների պատրաստումը) կարող ե և պետք ե զարդանա ավելի արագ, քան յերկրորդը (սպառման առարկաների պատրաստումը)։ Բայց այստեղից հասկանալի յե, ինարկե, ամենեին չի հետևում, թե արտադրության միջոցների պատրաստումը կարող ե զարգանալ սպառման առարկաների պատրաստումից բոլորովին անկախ և նրա նետ

վորեվի կապ ունենալուց դուրս: Մարքսն այդ  
առթիվ տուում է. «Մենք տեսանք (գիրք Ա,  
բաժին Ի), զոր մշտական շրջանառություն և  
կատարվում հաստատում կապիտալի և հաստա-  
տուն կապիտալի միջեւ, զորը, մի կողմից, անկախ  
և անձնական սպառումից այն խմաստով, զոր  
նա յերբեք չի մտնում այդ վերջինի մեջ, բայց  
զորը այնուամենայնիվ վերջին հաշվով (defini-  
տիվ) սահմանափակված և անձնական սպառու-  
մով, զորովճեան հաստատուն կապիտալի արտա-  
դրությունը յերբեք չի կատարվում իր իսկ հա-  
մար, այլ կատարվում է միայն նրա համար, զոր  
այդ հաստատուն կապիտալից ավելի շատ կատ-  
հանջվի արտադրության այն ճյուղերում, զորոնց  
արդյունքները մտնում են անձնական սպառման  
մեջ» (III, 1, 289; Ռուս. թարգմ. 242): Այսպիս,  
վերջին հաշվով, արտադրողական սպառումը  
(արտադրության միջոցների սպառումը) միշտ  
կապված է անձնական սպառման հետ, միշտ  
կախում ունի նրանից: Մինչդեռ կապիտալիզմին  
հատուկ է, մի կողմից, արտադրողական սպառ-  
ման անսահման ընդլայնման, կուտակման և արտա-  
դրության անսահման ընդլայնման ձգտումը, իսկ  
մյուս կողմից՝ ժողովրդական մասսաների պրոլե-  
տարացումը, զոր բավական նեղ սահմաններ և  
զնում անձնական սպառման ընդլայնման:

Պարզ է, վոր մենք այստեղ տեսնում ենք հա-  
կասություն կապիտալիստական արտադրության  
մեջ, և մեջբերված հատվածի մեջ Մարքսը մի-  
այն այդ հակասությունն ել արձանագրում է\*:  
Ա հատորի մեջ իրացման վերլուծությունը  
ամենելին չի հերքում այդ հակասությունը  
(հակառակ պահ Տուգան-Բարանովսկու կարծի-  
քին), ընդհակառակը ցույց տալով, զոր կապ կա-  
արտադրողական և անձնական սպառման միջև:  
Ինքնին հասկանալի յեւ, զոր կոպիտ սիալ կլիներ՝  
կապիտալիզմի այս հակասությունից (կամ  
նրա ուրիշ հակասություններից ևս) հետեցնել  
կապիտալիզմի սնննարինությունը կամ նախկին  
տնտեսական ռեժիմների համեմատությամբ  
անառաջադիմականությունը (ինչպես սի-  
նրա անառաջադիմականությունը)

\* Քոլորովին նույնալիք իմաստ ունի նաև մի ուրիշ  
հատված, զոր մեջբերում և պահան-Բարանովսկին  
(III, 1, 231, հմմտ. Տ. 232 մինչև պարբերության  
ընդլայնությունը և հետեւ անդը ճկնաժամների վա-  
վերջը), նույնպես և հետեւայլ անդը ճկնաժամների վա-  
սին. «Բոլոր իրական ճկնաժամների վերջին պատ-  
ճառ միշտ մնում է չքավորությունը և մասսաների  
սպառման սահմանափակությունը, զոր հակադրծում  
կապիտալիստական արտադրության ձգտումին՝  
արտադրողական ուժերն այնպես զարգացնելու, ասես  
թե նրանց գարգացման սահմանը լիներ հասարակու-  
թյան բացարձակ սպառողական ընդլայնակությունը  
միայն» («Das Kapital», III, 2, 21. Ռուս. թարգմ.  
միայն»)

ըում են անել մեր նարովնիկները): Կապիտալիզմի զարգացումը չի կարող կատարվել այլ կերպ,քան մի ամբողջ շարք հակասությունների մեջ, և այդ հակասությունների նշումը մեզ համար միայն պարզում ե կապիտալիզմի պատմականորեն անցողիկ բնույթը, պարզում ե ավելի բարձր ձեր անցնելու նրա ձգտման պայմաններն ու պատճառները:

Իմի բերելով բոլոր վերը շարադրածը, մենք այսպիսի հետևություն ենք ստանում. արտաքին շուկայի գերի հարցի լուծումը, վոր պ. Տուգան-Բարանովսկին ե շարադրել, հենց Մարքսից ե վերցրած «Կապիտալի» II և III հատորի միջև երացման (և շուկաների թեորիայի) հարցի վերաբերյալ վոչ մի հակասություն չկա:

Էջ 395), Նույնին և Մարքսի հետեյալ նկատումի իմաստը՝ «Հակասություն կապիտալիստական հասարակության մեջ բանվանենք, իրեն ապրանքների գնորդ, կարեռ ևն շուկայի համար: Բայց կապիտալիստական հասարակությունը ձգտում ե նրանց, իրենց ապրանքի՝ աշխատանքային ուժի վաճառորդի, սահմանափակել գնի նվազագույնով» («Das Kapital», II, 303): Այս տեղը պն Ն. — ոնի կողմից սխալ մեկնաբանվելու մասին մենք արդեն խոսել ենք 1897 թ. մայիսին «Խօ. Ը.»-ում: Վոչ մի հակասություն չկա այս բոլոր տեսքերի և երացման վերլուծության միջև II հատորի III բաժնում:

Գյուանք առաջ: Պ. Բուլգակովը պ. Տուգան-Բարանովսկուն մեղադրում ե, վոր նա սխալ է գնահատում մինչև Մարքսը յեղած տնտեսագետների ուսմունքները շուկաների մասին: Պ. Տուգան-Բարանովսկին պ. Բուլգակովին մեղադրում ե, վոր նա Մարքսի հայացքները կտրում ե զիտական այն հողից, վորի վրա նրանք աճել են, վոր նա գործն այնպես ե պատկերում, իբր «Մարքսի հայացքները վոչ մի կապ չունեն նրա նախորդների հայացքների հետ»: Այս վերջին կշտամբանը բոլորովին անհիմն ե, վորովհետեւ պ. Բուլգակովը վոչ միայն նման անհեթեթ կարծիք չի հայտնել, այլ, ընդհակառակը, բերել ե Մարքսից առաջ յեղած տարբեր գպրոցների ներկայացուցիչների հայացքները: Մեր կարծիքով, թե պ. Բուլգակովը, թե պ. Տուգան-Բարանովսկին հարցի պատմությունը շարադրելիս իզուր են այդքան քիչ ուշադրություն դարձրել Ադ. Սմիթի վրա, վորի վրա պարտադրաբար պետք ե վոր կանգ առնվեր ամենամեծ մանրամասնությամբ՝ «շուկաների թեորիան» հատուկ շարադրելիս «պարտադրաբար», վորովհետեւ հենց Ադ. Սմիթն ե նախահայրը հասարակական արդյունքը վոփոխուն կապիտալի և գերարժեքի (ըստ Ադ. Սմիթի տերմինաբանության՝ աշխատավարձի, շահույթի և ռենտայի) բաժանելու այն սխալական գոկտրինայի, վորը մին-

չև Մարքուր համառորեն պահպանվում էր և հնարավորություն չեր տալիս վոչ միայն լուծելու, այլև նույնիսկ ճշտորեն դնելու իրացման հարցը։ Պ. Բուլվակովը բոլորովին իրավացիորեն ասում եր, վոր «քանի սխալ են յեղակետային տեսակետերը և սխալ ե ձեակերպված պրոբլեմն ինքը, այդ վեճերը» (Չուկաների թեորիայի առթիվ, վոր ծագել են տնտեսական գրականության մեջ) «կարող ելին հասցնել միայն դատարկ ու սխոլատիկ ընդդիմաբանությունների» (Ն. աշխ. եջ 21, ձան+): Մինչդեռ հեղինակն Ադր. Սմիթին հատկացրել և ընդամենը մի փոքր եջ, դուրս թողնելով Ադր. Սմիթի թեորիայի մանրամասն ու փայլուն վերլուծությունը, վոր տպել ե Մարքուր «Կապիտալի» յերկրորդ հատորի 19. թղ գլխում (§ Ա. Տ. 358—383), և զրա փոխարեն կանգ առնելով յերկրորդականե վոչ ինքնուրույն թեորետիկների, Զ. Ա. Միլի և Փոն-Կիրխմանի ուսմունքների վրա։ Ինչ վերաբերում ե պ. Տուգան-Բարանովսկուն, ապանա բոլորովին ըշանցել ե Ա. Սմիթին և այդ պատճառով հետագա տնտեսագետների հայացքները շարադրելիս բաց ե բողել նրանց նիմնական սխալը (Սմիթի վերոհիշյալ սխալի կրկնությունը): Վոր այդ պայմաններում շարադրանքը չեր կարող բավարար լինել, — այդ ինքնին պարզ է։ Մահմանափակվենք յերկու որինակով։ Պարզ

վերաբատադրությունը պարզաբանող իր Հ1 սխեման շարադրելով, պ. Տուգան-Բարանովսկին ասում եր «Բայց ախը պարզ վերաբատադրության մեր յենթադրած դեպքը վոչ մի կասկած չի հարուցում։ կապիտալիստները, մեր յենթադրության համաձայն, սպառում են իրենց ամբողջ շահույթը, — հասկանալի բան ե, վոր ապրանքների առաջարկը չի գերազանցի պահանջարկից» («Արդարացման մեջ 409»): Այդ ճիշտութիւնը նախկին անտեսագետների համար այդ բնակ «հասկանալի բան» չէն, վորովինետև նրանք չելին կարողանում բացատրել նույնիսկ հասարակական կապիտալի պարզ վերաբատադրությունը, և չի ել կարելի այն պարզ գերաբարագրությունը, ուստի կապիտալացարել, առանց հասկանալու, վոր հասարացարությունը բաժանվում է կական արդյունքն ըստ արժեքի բաժանվում է կական արդյունքն ըստ արժեքի բաժանվում է կապիտալի գոփսիսուն կապիտալ հասարամուն կապիտալ + գերաբեքք, իսկ ըստ նյութական ձևի՝ յերկու մեծ ստորաբաժանման՝ արտադրության միջոցներ և սպառման միջոցներ։ Ուստի և Ա. Սմիթի մեջ այդ դեպքը «կատաձնելու» հարուցեց, վորոնց մեջ այդ դեպքը «կատաձնելու» հարուցեց, վորոնց մեջ նա, ինչպես ցույց տվեց Մարքուր, խճճվեց։ Իսկ նա, ինչպես ցույց տվեց Մարքուր, խճճվեց։ Իսկ յեթե հետագա տնտեսագետները կրկնում ելին Սմիթի սխալը, առանց նրա կասկածներն ընդունելու, առաջ միայն ցույց ե տալիս, վոր նրանք տվյալ հարցում թեորետիկապես հետազարձ քայլ են արել։ Ճիշտ նույնպես սխալ ե, յերբ պ. Տու-

3286-55

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

գան-Բարանովսկին ասում են «Սեյ-Ռիկարդոյի ուսա-  
սունքը թեորետիկորեն բոլորովին ճիշտ են յեթե  
նրա հակառակորդները նեղություն կրեյին թվերով  
հաշվարկելու, թե կապիտալիստական տնտեսու-  
թյան մեջ ինչպես են բաշխվում ապրանքները,  
ապա նրանք հեշտությամբ կհասկանային, վոր այդ  
ուսմունքի ժխտումն իր մեջ պարունակում ե  
տրամաբանական հակառակորդներուն» (I.c., 427): Վ՞շ,  
Սեյ-Ռիկարդոյի ուսմունքը թեորետիկորեն բո-  
լորովին սխալ են Ռիկարդոն կրկնել ԵՄիթի սխալը  
(տես նրա «Сочинения», որ. Յիբերա, Ընդ.  
1882, եջ 221), իսկ Սեյը բացի այդ լրացրել ե այն,  
պնդելով, թե հասարակության համախառն և զուտ  
արդյունքի միջև տարբերությունը լիովին սուբ-  
յեկտիվ ե: Յեկ ինչքան ել վոր Սեյ-Ռիկարդոն  
և նրանց հակառակորդները «հաշվարկեյին թվե-  
րով», — յերբեք վորեն թվական յեզրակացության  
չեյին գա, վորովհետեւ այստեղ բանը բոլորովին  
թվերի մեջ չե, ինչպես բոլորովին ճիշտ նկատել  
ենակ Բուլգակովը պատճենական հակառակորդների մի այլ տեղի առթիվ (Բուլգակով, I.c. եջ 21,  
ծան.):

Մենք այժմ մոտեցանք պատճենական պատճենական հակառակորդների մի ուրիշ առարկային  
եր այն ե՝ թվային սխեմաների և նրանց նշանա-  
կության հարցին: Պատճենական պատճենակոր-  
դիքի մի այլ տեղի առթիվ (Բուլգակով, I.c. եջ 21,  
ծան.):

պատճենական պատճենակորդը, «շնորհիվ  
որինակից» (այսինքն Մարքսի սխեմայից) «շեղ-  
վելուն, զգալի չափով կորցնում են իրենց համո-  
գիչ կարողությունը և չեն պարզաբանում հասարա-  
կական վերաբաղրության պրոցեսը» (I.c., 248),  
իսկ պատճենական պատճենակորդը պարզ չէ հասկանում նման սխեմա-  
ների բուն նշանակությունը» («Мир божий» №6,  
1898 թ., եջ 125): Մեր կարծիքով, ներկա դեպ-  
քում ճշմարտությունը ամբողջովին պատճենակո-  
րդի կողմն ե: «Սխեմաների նշանակությունը պարզ  
չէ հասկանում» ավելի շուտ պատճենական պատճենակորդին, վորը յենթադրում ե, թե սխեմաներն «ապա-  
ցուցում են հետևող թյունը» (ibid.): Սխեմաներն  
ինքնին վոչինչ չեն կարող ապացուցել նրանք կարող  
են միայն լուսաբանել պրոցեսը, յեթե նրա առան-  
ձին Տարբեր թեորետիկորեն պարզաբանված են:  
Պատճենական պատճենակորդն կազմել ե իր սեփա-  
կան սխեմաները, վորոնք տարբեր են Մարքսի  
սխեմաներից (և անշուշտ ավելի անպարզ, քան  
Մարքսի սխեմաները), ըստվորում բաց ե թողել  
պրոցեսի այն տարբերի թեորետիկական պարզա-  
բանումը, վորոնք պետք ե լուսաբանվեն սխեմա-  
ներով: Մարքսի թեորիայի հիմնական դրույթը,  
վորը (Մարքսը) ցույց տվեց, վոր հասարակա-  
կան արդյունքը բաժանվում ե վոչ միայն վոփո-

խուն կտակիտալի + զերարժեքը (ինչպես մտածում  
եր Ա. Սմբթը, Ռիկարդոն, Պրուգոնը Թողբերտուար  
և այլն), այլ հասատատուն կապիտալի + նշան մտ-  
սերը, — այդ գրույթը պլ. Տուգան-Բարանովսկին  
բոլորվին չպարզաբանեց, թե ավետե իր սխեմա-  
ներում ընդունեց: ♦♦ Տուգան-Բարանովսկու գիրքը  
կարգացողն ի վիճակի չե հասկանալու նոր թեո-  
րիայի այդ հիմնական դրույթը: Հասարակական  
արտադրության յերկու ստորաբաժանումը (Դար-  
կաներ) տարբերելու անհրաժեշտությունը պլ.  
Տուգան-Բարանովսկին բոլորվին չի պատճա-  
ռաբանել այնինչ, ըստ պլ. Բուլգակովի ճիշտ  
նկատման, «միայն այդ բաժանման մեջ ավելի  
շատ թեորետիկական իմաստ կա, քան շուկա-  
ների թեորիային վերաբերող բոլոր նախընթաց  
ընդդիմաբանությունների մեջ» (Խ. Ը., եջ 27):  
Անա թե ինչու Մարքսի թեորիայի շարադրումը  
պլ. Բուլգակովի մոտ անհամեմատ ավելի պարզ  
ու ճիշտ ե, քան պլ. Տուգան-Բարանովսկու մոտ:

Իբրև յերափակություն, մի քիչ ավելի ման-  
բաման կանգ առնելով պլ. Բուլգակովի գրքի  
վրա, մենք պետք ե նկատենք հետեւյալը: Նրա  
գրքի մոտ մի յերրորդը նվիրված ե «կապիտա-  
լի շրջապատշանների տարբերության» և «աշխա-  
տավարձի ֆոնդի» հարցերին: Այդ վերնագրերը

կըող պարբերությունները մեզ թվում են ամենից  
ավելի քիչ հաջողած: Հիշված պարբերությունն-  
երից առաջնում հեղինակը փորձում է լրաց-  
նել (տես եջ 63, ծան.) Մարքսի վերլուծու-  
թյունը և շատ բարդ հաշվարկումների ու սխեմա-  
ների մեջ ե խորանում, վորակեսզի լուսաբանի այն,  
թե ինչպես ե կատարվում իրացման պրոցեսը  
կապիտալի շրջապատշախի տարբերությունների  
ժամանակ: Մեզ թվում ե, վոր վերջին հետևու-  
թյունը, վորին հանգել ե պլ. Բուլգակովը (վոր կա-  
պիտալի շրջապատշախի տարբերության ժա-  
մանակ կատարվող իրացումը բացարելու հա-  
մար անհրաժեշտ ե յերկու ստորաբաժանումնե-  
րի կապիտալիստների մոտ պաշարների գոյու-  
թյուն յենթագրեր հմատ եջ 85), ինքնին հետեւ-  
վում ե կապիտալի և արտադրության շրջանա-  
ռության ընդհանուր որենքներից, վոր այդ  
պատճառով վոչ մի հարկ չկար Ա. և Ի ստորա-  
բաժանման մեջ՝ կապիտալի շրջապատշանների  
հարաբերությունների տարբեր գեպքեր յենթա-  
գրելու և մի ամբողջ շարք գրաֆիկներ կառու-  
ցելու: Հարկ ե լինում նույնն ասելու նաև հիշ-  
ված պարբերություններից յերկրորդի մասին:  
Պ. Բուլգակովը կատարյալ արդարացիությամբ  
ուշում ե պլ. Գերցենշտեյնի այն պնդման սխալա-  
նությունը, վորը հակասություն եր գտնում

Մարքուի ուսմունքի մեջ այդ հարցին վեբաբե-  
րյալ: Հեղինակը բոլորովին իրավացի նկատում  
է, վոր «յեթե բոլոր կապիտալների շրջապառույթը  
հավասարեցնել մի տարու, ովքալ տարեսկզբում  
կապիտալիստները համեմանում են ինչպես  
անցյալ տարվա արտադրության ամբողջ ար-  
դյունքի, այնպես ել այդ արժեքին հավասար  
դրամագումարի տերը» (Եջ 142—3): Բայց պ՛-  
բուզգակովը բոլորովին իզուր եր ընդունում (Եջ  
92 և հաջ.) նախկին անտեսագետներից զուտ  
սխոլաստիկ այդ հարցադրումը (աշխատավարձը  
վերցվում ե արդյոք ընթացիկ արտադրությունից,  
թե նախընթաց աշխատանքային ժամանակա-  
շրջանի արտադրությունից) և իրեն համար  
ավելորդ դժվարություններ ստեղծում, «բացար-  
կելով» Մարքսի ցուցմունքը, վորը (Մարքու)  
«ասես թե հակասում ե իր հիմնական տեսա-  
կետին», «դատելով այնպես, ասես թե» «աշխա-  
տավարձը վերցվում ե վոչ թե կապիտալից, այլ  
ընթացիկ արտադրությունից» (Եջ 135): Մարքուը  
հարցն այդ ձեռով բնավ չի ել դնում: Պ. Բուզգա-  
կովի մոտ Մարքսի ցուցմունքը «բացարկելու» ան-  
համաժամանակ նրանից եր ծագել, վոր նա-  
փորձում ե Մարքսի թեորիային համակցել  
նրան բոլորովին խորի մի հարցադրում: Թանի  
վոր պարզված ե, թե ինչպես ե ընթանում հա-

սարակական ամբողջ արտադրության պլոցեսը  
հասարակության զանազան դասակարգերի՝ ար-  
դյունքը սպառելու կապակցությամբ, թե ինչպես  
են կապիտալիստները մուծում արդյունքի շրջա-  
նառության համար անհրաժեշտ փողը,—քանի  
վոր այդ բոլորը պարզված, ե, այն հարցը, թե՝  
աշխատավարձը վերցվում ե ընթացիկ թե նախ-  
ընթաց արտադրությունից, կորցնում ե ամեն  
մի լուրջ նշանակություն: Ուստի և «կապիտալի»  
վերջին հատորների հրատարակիչը, Ենգելսը,  
յերկրորդ հատորին կցած առաջարանում ասում  
ե, թե, որինակ, Թողբերտուսի դատողու լուն-  
ներն այն մասին՝ «աշխատավարձը վերց: Ամ ե  
արդյոք կապիտալից, թե յեկամտից, վերաբ-րում  
են սխոլաստիկայի բնագավառին և «կապիտալի»  
այս յերկրորդ գրքի Յ-րդ բաժնի բովանդակու-  
թյամբ բոլորովին ավելորդանում են» («Das Kapital», II, Vorwort\*, S. XXI):

Գրված ե 1898 թ. վերջին:

Տպագրված ե „Հայուս օօօքրենից“-յում:  
Խ-1899 թ. հունվար:

Ստորագրությունը՝ Վ. Լառե մի թ ույս:

\*—առաջաբան: Խմբ:

## ԴԱՐՁՅԱԼ ԻՐԱՑՄԱՆ ԹԵՂԻՐԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Научное обозрение»<sup>1</sup> այս տարվա (1899) հունվարյան դրույկում զետեղված ե իմ «Դիտողություն շուկաների թեորիայի հարցի վերաբերյալ (պ. պ. Տուգան-Բարանովսկու և Բուլգակովի բանավեճի առթիվ)», իսկ նրանից հետո Պ. Բ. Ստրուվեյի «Շուկաների հարցի մասին կապիտալիստական արտադրության որով (Բուլգակովի գրքի և Իլյինի հոդվածի առթիվ)» հոդվածը Ստրուվեն «զգալի չափով հերքում ե Տուգան-Բարանովսկու, Բուլգակովի և Իլյինի թեորիան» (նրա հոդվածի եջ 63) և շարադրում ե իր հայցը Արքսի՝ իրացման թեորիայի մասին:

Իմ կարծիքով, Ստրուվեյի բանավեճը հիշված գրողների գեմ. առաջ ե յեկել վոչ այնքան ըստ եյության տարածայնությունից, վորքան նրանից, վոր Ստրուվեն սխալ պատկերացում ունի իր պաշտպանած թեորիայի բովանդակության մասին, նախ, Ստրուվեն շփոթում ե բուրժուական տնտեսագետների՝ շուկաների թեորիան, — վորոնք ուշ

սուցանում ելին, թե արդյունքները փոխանակվում են արդյունքների հետ, և վոր այդ պատճառով արտադրության ու սպառման միջև պետք ե համապատասխանություն գոյություն ունենա, — և Արքսի՝ իրացման թեորիան, վորը (Մարքսը) իր վերլուծումով ցույց տվեց, թե ինչպես ե կատարվում հասարակական ամբողջ կապիտալիստական շուկաներությունն ու շրջանառությունը, այսինքն՝ արդյունքի իրացումը կապիտալիստական հասարակության մեջ\*, Վոչ Արքսը, վոչ ելնրան շարադրող գրողները, վորոնց հետ բանավիճում ե Ստրուվեն, վոչ միայն այդ վերլուծությունից չեյին, հետեւնում արտադրության ներդաշնակությունը սպառման հետ, այլ ընդհակառակը, յեռանդագին ընդգծում եյին կապիտալիզմին հասուկ այն դաշտին ընդգծում եյին կապիտալիզմին հասուկ այն հակասությունները, վորոնք չեն կարող չըրակորդվել կապիտալիստական իրացման որով\*\*: Յերկրորդ, Ստրուվեն իրացման աբուրակտ թեորիան (վորի մասին ե հենց, վոր բացառազեն խոսում եյին նրա ընդդիմախոսները) շփոթում ե կապիտալիստական արդյունքի՝ այս կամ այն յերկրում այս կամ այն դարաշրջանում իրացվելու կոնկրետ պատմական

\* Տես իմ «Ետյուններ», եջ 17 և ուր. (Տես Յերկրորդ հ. Ա, 3-րդ հրատ. 1930 թ., եջ 24 և ուր., Խմբ.):

\*\* Ibid, եջ 20, 27, 24 և ուր. (Յերկրորդ հ. Ա, 3-րդ հրատ. 1930 թ., եջ 27, 33, 30 և ուր., Խմբ.):

պայմանների հետ. Այդ նույնն է, թե վորևե մեկը հողային ռենտայի աբստրակտ թեորիան շփոթեր այս կամ այն յերկրում յերկրագործական կապիտալիզմի զարգացման կոնկրետ պայմանների հետ, Ստրուկեյի այս յերկու հիմնական մոլորությունից բղիսել են մի շարք թյուրիմացություններ, վորոնք սլարդելու համար անհրաժեշտ ե քննարկել նրա հողվածի առանձին դրույթները:

1. Ստրուկեն չի համաձայնում իմ կարծիքին, թե իրացման թեորիան շարադրելիս անհրաժեշտ ե հատկապես կանգ առնել Աղ. Սմիթի վրա: Յեթե մինչև Աղամը համեմ, —դրում ե նա, —ապա պետք եր կանգ առնել վոչ թե Սմիթի, այլ ֆիզիոկրատների վրա: Վոչ, այդ այդպես չե: Հենց Աղ. Սմիթն ե, վոր չի սահմանափակվել այն (ֆիզիոկրատներին ել հայտնի) ճշմարտությունն ընդունելով, թե արդյունքները փոխանակվում են արդյունքներով, այլ դրել ե նույնպես այն հարցը, թե ինչպես են փոխարինվում (իրացվում) հասարակական կալիսալի և արդյունքի տարբեր բաղադրիչ մասերն ըստ իրենց արժեքի \*:

\* Իմիջիայլոց, «Научн. обозр.»-իմ հողվածում «արժեք» տերմինն ամենուրեք փոխարինված ե «արժողություն» տերմինով: Այդ յես չեմ արել, այլ խմբագրությունը: Յես առանձնապես եյտկան նշանակություն չեմ թյունը: Ես առանձնապես եյտկան նշանակություն չեմ տալիս այս կամ այն տերմինը գործածելուն, բայց ան-

Այդ պատճառով ե հենց, վոր Մարքսը լիովին լուգունելով, վոր ֆիզիոկրատների ռւսմունքի մեջ, որի նակ՝ Քենսի «Tableau économique»-ում\* կային «իրենց ժամանակի համար հանձարեղ»\*\* դրույթներ, ընդունելով, վոր վերաբաղրության պըսցեսի վերլուծության մեջ Աղ. Սմիթը նույնիսկ վորոշ կողմերով մի քայլ հետ գնաց ֆիզիոկրատների համեմատությամբ («Das Kapital», I<sup>2</sup> 612, Anm. 32), բայց և այսպես իրացման հարցի պատմության տեսության մեջ ֆիզիոկրատներին մի մեկուկես եղ հատկացըել ե («Das Kapital», II, S. 350—351), այսինչ Աղ. Սմիթին նա հատկացըել յերեսուն եցից ավելի (Ib., 351—383), մասնաւագան քննելով Աղ. Սմիթի հիմնական սխալը, վորը հետագա ամբողջ քաղաքատնտեսությանը վորը հետագա ամբողջ քաղաքատնտեսությանը վորը հետագա ամբողջ քաղաքատնտեսությանը վորը կանգ առնելն անհրաժեշտ ե հենց նրա համար, վորպիսզի սլարդվի Սմիթի սխալը շարունակ կրկնող բուրժուական տնտեսադեմարքությունը իրացման թեորիան:

հրաժեշտ եմ համարում նշել, վոր յես գործածել և միշտ գործածում եմ «արժեք» տերմինը:

\*—«Տնտեսագիտական պատկեր»: Խմբ.:

\*\* Fr. Engels: «Herrn E. Dühring's Umwälzung der Wissenschaft», Dritte Aufl., եջ 270 այն զիսից, վոր Մարքսն ե դրել (Ենթայս, «Անտի-Դյուրինգ»: Այստեղ

2. Պ. Բուլգակովն իր գրքում բոլորովին  
 զրավացի ասում ե, թե բուրժուական տնտեսա-  
 գետները շփոթում եյին հասարակ ապրանքա-  
 շրջանառությունը և ապրանքների կապիտալիս-  
 տական շրջանառությունը, իսկ Մարքսը տար-  
 բերություն սահմանեց սրա ու նրա միջև:  
 Ստրուկեն յենթազրում ե, թե պ. Բուլգակովի  
 պնդումը թյուրիմացության վրա յէ հիմնված: Իմ  
 կարծիքով, ընդհակառակը, այսուեղ թյուրիմացու-  
 թյունը վոչ թե պ. Բուլգակովի, այլ Ստրուկեյի  
 կողմից ե: Իրոք, Ստրուկեն ի՞նչպես ե հերքում  
 պ. Բուլգակովին: Զափազանց տարրինակ. նա  
 նրան հերքում ե նրանով, փոք նրա գրութն ե  
 կրկնում: Ստրուկեն ասում ե՝ Մարքսը չի կարող  
 համարվել իրացման այն թեորիայի կողմնակից,  
 ըստ փոքի արդյունքը կարող ե իրացվել ավալ  
 հասարակության ներսում, փորովճետե Մարքսը  
 սուր տարբերություն եր անցկացնում հասա-  
 րակ ապրանքաշրջանառության և կապիտալիս-  
 տական շրջանառության միջև» (!! Եջ 48): Այս  
 այս հենց այն ե, ինչ պ. Բուլգակովն եր պնդում:  
 Հենց զրա համար ել Մարքսի թեորիան չի հան-  
 գում այն ճշմարտությունը կրկնելուն, թե ար-  
 դյունքները փոխանակվում են արդյունքներով:  
 Մարքսին պատկանում ե «Քննադատական ուրվա-  
 գծեր»-ից» գլուխը: Խմբ.):

Ուստի և պ. Բուլգակովը միանգամայն իրավա-  
 ցիորեն «գատարկ ու սխոլաստիկ լոգիմարանու-  
 թյունների» շաբթը դասեց բուրժուական ու մա-  
 նը-բուրժուական տնտեսագետների վեճը գեր-  
 արտադրության հսարավորության մասին: Վիճող  
 յերկու կողմն ել շփոթում եյին ապրանքային  
 և կապիտալիստական շրջանառությունը, յերկուան  
 ել կրկնում եյին Աղ. Սմիթի սխալը:

3. Ստրուկեն իրացման թեորիան իզուր ե անվա-  
 նում համամատնորեն բաշխելու թեորիա: Այդ սխալ  
 և անխուսափելուրեն առաջ ե բերում թյուրիմա-  
 ցությունները: Իրացման թեորիան մի աբստրակտ\*  
 թեորիա յե, փոքը ցույց ե տալիս, թե ինչպես ե  
 կապիտալ հսարակական ամբողջ կապիտալի  
 կատարվում հսարակական ամբողջ կապիտալի  
 վերաբարերությունն ու շրջանառությունը: Այդ  
 աբստրակտ թեորիայի անհրաժեշտ դրյան ե, նաև,  
 աբստրաքին առևտրի, արտաքին շուկաների աբս-  
 տրահումը: Բայց աբստրահելով աբստրաքին առև-  
 տրահումը, իրացման թեորիան բնակ չի պնդում, թե  
 յերեկը գոյություն ունեցել ե կամ կարող եր գո-  
 յություն ունենալ կապիտալիստական հսարա-  
 ցություն առանց արտաքին առևտրի\*\*: Յերկրորդ,  
 կություն առանց արտաքին առևտրի\*\*:

\* Տես իմ հոդվածը «Научн. обозр.» յում, եջ 37  
 (ներկա գրքույթի եջ 3: Խմբ.):  
 \*\* Ուժ. եջ 38 (ներկա գրքույթի եջ 4: Խմբ.):  
 Հմատ. «Ետյուդներ», եջ 25 (Յերկրորդ Ա. Յ. Յուդ)

իրացման աբսոլյակտ թեորիան յենթադրում ե և պետք ե յենթադրի արդյունքի համամասնական բաշխում կապիտալիստական արտադրության զանագան ճյուղերի միջև։ Բայց յենթադրելով այդ, իրացման թեորիան բնավ չի պնդում, թե կապիտալիստական հասարակության մեջ արդյունքները միշտ բաշխվում են կամ կարող են բաշխվել համամասնորեն։ Պ. Բուլգակովը լիովին իրավայիրորեն համեմատում ե իրացման թեորիան արժեքի թեորիայի հետ։ Արժեքի թեորիան յենթադրում ե և պետք ե յենթադրի պահանջարկի ու առաջարկի հավասարություն, բայց բնավ չի պնդում, թե կապիտալիստական հասարակության մեջ միշտ դիտվել ե և կարող երդիտվել նման հավասարություն։ Ինչպես և կա-

հրատ. 1930 թ., եջ 32; Խմբ.), «ԶԵՆՔ ԺԽԱՊՈՎ ԱՐԴՅՈՒՔ մենք արտաքին շուկայի անհաժանշատությունը կապիտալիզմի համար։ Իհարկե, վհչ։ Բայց միայն արտաքին շուկայի հարցը բացարձակորեն վոչ մի ընդհանուր բան չունի իրացման հարցի հետ։

\* «Վոչ միայն գերարժեքին փոխարինող արդյունքները, այլև փոփոխուն... և հաստատուն կապիտալին փոխարինող արդյունքները... բոլորն ել միատեսակ իրացվում են միայն «դժվարությունների» մեջ, մշտական տատանումների մեջ, վորոնք կապիտալիզմի աճումով զանում ավելի ու ավելի ուժեղ» ... [«Ետյուդներ», եջ 27 (Յերկերի Ա., Յ-րդ հրատ. 1930 թ.,

պիտալիզմի ուրիշ ամեն մի որենք, իրացման որենքն «իրագործվում ե միայն չիրագործվելու ձանապարհով» (Բուլգակով, մեջբ. Ստրուվեյի հոդվածում, եջ 56)։ Շահույթի միջին և հավանության ճյուղերի միջև։ Բայց յենթադրում ե, իրոք, սար նորմայի թեորիան յենթադրում ե, իրացման համամասնական բաշխումը նրա զանագան ճյուղերի միջև։ Բայց դե հո Ստրուվեն այդպիսի հիման վրա այդ թեորիան չի անվանի համամասնական բաշխման թեորիա։

4. Ստրուվեն վիճարկում ե իմ կարծիքը, թե Մարքն արդարացի մեղադրում եր Ռիկարդոյին Ադ. Սմիթի սխալը կրկնելու համար։ «Իրավացի չեր Մարքսը», գրում ե Ստրուվեն։ Ստրուվեն

եջ 33: Խմբ.)]. Գուցե Ստրուվեն կասի, թե այդ տեղին հակասում են ուրիշ տեղեր, որինակ՝ եջ 31-ում (Յերկերի Ա. Յ-րդ հրատ. 1930 թ., եջ 38: Խմբ.)... (Յերկերի Ա. Յ-րդ հրատ. 1930 թ., եջ 38: Խմբ.)... «կապիտալիստները կարո՞ղ են իրացնել գերարժեքը... Այդ հակասությունը միայն թվայող ե, Վորքան վոր մենք վերջնում ենք իրացման արստրակտ թեորիան (իսկ նարոդնիկներն առաջարկեցին հենց գերարժեքը, իրացնելու անհնարինության արստրակտ թեորիան), իրացնելու անխուսափելի յի հետևությունը իրացման այնքան անխուսափելի մասին։ Բայց շարագրելով արստրակտ թեորիան, պետք ե նշել այն հակասությունները, որակտ թեորիան, պետք ե նշել այն հակասությունները, զենց վոր հատուկ են իրացման իրական պրոցեսին։ Հենց այդ նշումն ել արգած ե իմ հոդվածում։

կայն, Մարքսը մի տեղ ուզուակի մեջբերում ե  
Ռիկարդոյի աշխատությունից (II 333)\*: Մարտ-  
վեն անգիտանում ե այդ տեղը: Հենց հետեւյալ եջում  
Մարքսը բերում ե Ռամսոնի (Ramsay) կարծի-  
քը, վորը նույնպես նկատի ե Ռիկարդոյի հենց  
այդ սխալը: Յես ցույց եմ տվել նույնպես Ռի-  
կարդոյի աշխատության մի ուրիշ տեղը, վոր-  
տեղ նա ուզուակի ասում ե. «Յուրաքանչյուր  
յերկրի հողի և աշխատանքի ամբողջ արդյունքը  
յերեք մասի յե բաժանվում գործավարձ, շա-  
հույթ և ունտա» (այստեղ սխալմամբ բաց ե  
թուղնված հաստատուն կապիտալը: Տես «Сочи-  
нения Рикардо», пер. Зибера, № 221): Մարտ-  
վեն այդ տեղն ել ե լոռությամբ անցնում: Նա  
մեջբերում ե միայն Ռիկարդոյի մի ծանոթա-  
գրությունը, վորտեղ նշվում ե համախառն և

\* Մարքսի գնահատության արդարացիությունը  
հատուկ ակնառությամբ յերեսում ե նույնպես այն  
բանից, վոր Ռիկարդոն Սմիթի նման սխալ հայացք  
ուներ առանձնակի կապիտալի կուտակման մասին:  
Ռիկարդոն կարծում եր հենց, թե գերարծիքի կու-  
տակվող մասն ամբողջությամբ ծախսվում ե աշխա-  
տավարձի վրա, այնինչ նա ծախսվում ե՝ 1) հաստա-  
տավարձի վրա և 2) աշխատավարձի վրա:  
Տես «Das Kapital», I<sup>2</sup>, 611—3, դ. 22, § 2: — Հմտ.  
«Ետյուդներ», № 29, ծանոթ. (Յերկրի II հ., 3. բդ  
հրատ. 1930 թ., № 36: Խմբ.):

զուտ յեկամտի տարբերության մասին Սեյի  
գաստողության անհեթեթությունը: «Կապիտալի»  
III հատորի 49-րդ գլուխում, վորը շարադրում ե  
իրացման թեորիայից արած հետեւությունները,  
Մարքսը բերում ե Ռիկարդոյի հենց այդ ծա-  
նոթագրությունը և նրա առթիվ հետեւյալն ե ասում:  
«Ի միջի այլոց, ինչպես հետո կաեմնենք», —  
ըստ յերեսութիւն նկատի ունի «Կապիտալի»  
IV հատորը, վորը զեռ հրատարակված չե, —  
«Ռիկարդոն վոչ մի տեղ չի հերքել ապրանքների  
գնի սխալ վերլուծությունն ըստ Սմիթի, այն  
ե՝ այդ գնի՝ յեկամուտների (Revenuen:) արժեք-  
ների գումարի վրա տարաբաշխվելու վերլու-  
ծությունը: Ռիկարդոն չի մտածում այդ վեր-  
լուծության սխալականության մասին և իր վեր-  
լուծումների ժամանակ այն իբրև ճիշտ ընդու-  
նում ե այնչափով, վորչափով «վերանում ե»  
ապրանքների արժեքի մշտական չափից: Ժամա-  
նակ առժամանակնական վերադառնում ե պատկերաց-  
ման նույն յեղանակին» (այսինքն՝ Սմիթի պատ-  
կերացման յեղանակին: «Das Kapital», III, 2,  
377: ու Բարգմ. 696): Ընթերցողին ենք թող-  
նում դատելու, թե ով ե իրավացիք: Մարքսն  
արդյոք, վորն ասում ե, թե Ռիկարդոն կրկնում  
ե Սմիթի սխալը, թե Մարտուվեն, վորն ասում ե,  
թե Ռիկարդոն «հիանալի (?) հասկանում եր, վոր

հասարակական ամբողջ արդյունքը չի սպառվում աշխատավարձով, շահույթով և ունտայով», և թե Ռիկարդոն «անգիտակցորեն» (!) վերանում եր հասարակական արդյունքի այն մասերից, վորոնք արտադրածախքերն են կազմում»։ Կարելի՞ յե արդյոք նիանալի համանալ և միևնույն ժամանակ անգիտակցորեն վերանալ։

5. Ստրուվեն վոչ միայն չերքեց Մարքսի պնդումները, թե Ռիկարդոն փոխ եւ առել Սմիթի սխալը, այլ ինքն ել իր հոդվածում կրկնեց նույն սխալը։ «Տարորինակ եռ. մտածել,—դրում եւ Ստրուվեն,—վոր հասարակական արդյունքի այս կամ այն բաժանումը կատեգորիաների՝ կկարողանար եյական նշանակություն ունենալ իրացման ընդհանուր հասկացողության մեջ, մասնավանդ վոր իրացվող արդյունքի բոլոր մասերը իրացման պրոցեսում (համախառն) յեկամտի ձև են ընդունում, և կյասիկները դրանք դիտում եյին իբրև յեկամուտ» (եջ 48)։ Բանն ել հենց այն ե, վոր իրացվող արդյունքի բոլոր մասերը չեն, վոր (համախառն) յեկամտի ձև են ընդունում։ Սմիթի հենց այս սխալը պարզաբանեց Մարքսը, վորը ցույց տվեց, թե իրացվող արդյունքի մի մասը յերբեք չի ընդունում և չի կարող ընդունել յեկամտի ձև։ Այդ՝ հասարակական արդյունքի այն մասն ե, վորը փոխա-

րինում ե արտադրության միջոցներ պատրաստելուն ծառայող հաստատուն կապիտալին (հաստատուն կապիտալ I ստորաբաժանման մեջ, ըստ Մարքսի տերմինով կիայի)։ Որինակ, սերմացուն գյուղատնտեսության մեջ՝ յերբեք չի ընդունում յեկամտի ձև, դարձյալ քարածուխ հանքահանելու վրա գործադրվող քարածուխը յերբեք չի ընդունում յեկամտի ձև և այն և այն։ Հասարակական ամբողջ կապիտալի վերաբարդության և շրջանառության պրոցեսը հասկացվել չի կարող, յեթե չառանձնացվի համախառն արդյունքի այն մասը, վորն ընդունակ ե միայն իբրև կապիտալ ծառայելու, վորը յերբեք չի կարող յեկամտի ձև ընդունել\*։ Կապիտալիստական զարգացող հասարակության մեջ հասարակական արդյունքի այդ մասն անհրաժեշտորեն պետք ե աճի ավելի արագ, քան այդ արդյունքի ֆնացած բոլոր մասերը։ Միայն այդ որևէով ե, վոր կարող ե բացատրվել կապիտալիզմի ամենախոր հակասություններից մեկը՝ ազգային հարըստության աճումն ընթանում ե հսկայական պրագությամբ, մինչդեռ ժաղովրդական սպառման

\* Հմմտ. «Das Kapital», III, 2, 375—376 (ռուս. թարգմ. 696) համախառն պրոդուկտի և համախառն յեկամտի առբերության մասին։

աճումն ընթանում ե (իեթե ընթանում ե) շատ  
դանդաղ:

6. Ստրուվեն «ամենևին չի հասկանում», թե  
ինչու հաստատուն և փոփոխուն կապիտալի՝  
Մարքսի դրած տարբերումը «անհրաժեշտ է  
իրացման թեորիայի համար», և ինչու յես «հատ-  
կապես պնդում եմ» այդ:

Ստրուվեյի այդ չհասկանալը, մի կողմից, պարզ  
թյուրիմացության արդյունք եւ նախ, Ստրուվեն  
ինքն ընդունում է այդ տարբերման մի արժանի-  
քը, այն ե՝ վոր նրա մեջ տեղափորվում է ամ-  
բողջ արդյունքը, և վոչ թե միայն յեկամուտները:  
Նրա մյուս արժանիքն ել այն ե, վոր այն տրա-  
մաբանորեն իրար ե կապում իրացման պրոցեսի  
գերլուծությունը և առանձնակի կապիտալի ար-  
տադրության պրոցեսի վերլուծությունը: Վերն ե  
իրացման թեորիայի խնդիրը—ցույց տար, թե  
ինչպես ե կատարվում հասարակական ամբողջ կա-  
պիտալի վերաբարությունն ու շրջանառությու-  
նը: Միթե առաջին հայացքից արդեն պարզ չե,  
վոր այդ ժամանակ փոփոխուն կապիտալի դերը  
պետք ե արմատապես տարբեր լինի հաստատուն  
կապիտալի դերից: Փոփոխուն կապիտալին փո-  
խարինող պերուկաները պետք ե վերջիվերջո փո-  
խարկեն բանվորների սպառման առարկաների  
հետ և ծածկեն բանվորների սովորական սպա-

ռումբ: Հաստատուն կապիտալին փոխարինող ար-  
դյունքները պետք ե վերջիվերջո փոխանակվեն  
արտադրության միջոցների հետ և պետք ե գոր-  
ծադրվեն իրեկ կապիտալ նոր արտադրության հա-  
մար: Ուստի և հաստատուն և փոփոխուն կապի-  
տալների տարբերումն անպայման անհրաժեշտ է  
իրացման թեորիայի համարնախ, Ստրուվեյի թյու-  
րիմացությունը նրանից ե ծագում, վոր նա այս-  
տեղ ել իրացման թեորիա ասելով բոլորովին քմա-  
հաճորեն և սխալ հասկանում ե այն թեորիան, վորը  
ցույց ե տալիս, թե արդյունքները բաշխվում են  
համամասնորեն (տես մանավանդ եջ 50—51): Մենք  
վերն արդեն ասացինք, և ելի կրկնում ենք՝ իրացման  
թեորիայի բովանդակության մասին այդպիսի  
պատկերացումը սխալ ե:

Մյուս կողմից, Ստրուվեյի չըմբռնելը բղխում  
ե նրանից, վոր նա անհրաժեշտ և համարում  
Մարքսի թեորիայի մեջ տարբերություն անցկաց-  
նել «սոցիոլոգիական» և «տնտեսագիտական» կա-  
տեգորիաների միջև և միքանի ընդհանուր դիտո-  
ղություններ ե անում այդ թեորիայի դեմ: Յես  
այդ առթիվ, նախ, պիտի ասեմ, թե այդ ամենը  
բոլորովին չի վերաբերում իրացման թեորիայի  
հարցին: յերկրորդ, թե Ստրուվեյի անցկացընծ  
տարբերությունը յես համարում եմ վոչ պարզ  
և նրանում վոչ մի ռեալ ոգուտ չեմ տեսնում:

Յերբորդ, յես վոչ միայն վիճելի, այլև ուղղակի սխալ եմ համարում Ստրուվեյի պնդումները վորը հայտարարում ե, թե «Մարքսի իւևն համար, անվիճելի յե, պարզ չեր» իր թեորիայի «սոցիուլիստական հիմունքների հարաբերությունը» շուկաների յերևույթների վերլուծությանը, թե «արժողության ուսմունքը, ինչպես այն շարադրված ե «Կապիտալի» I և III հատորներում, անվիճելի յե, տառապում ե հակասականությամբ»\*: Ստրուվեյի

\* Ստրուվեյի այս վերջին հայտարարությանը յես հակադրում եմ արժեքի թեսքիայի նորագույն շարդրումը կ. կառուցկու կողմից, վորն ասում և ցույց ետալիս, վոր շահույթի միջին նորմայի որենքը «չի վոչ չընչայնում արժեքի որենքը, այլ միայն ձևափոխում ե ցանցական արժեքը» («Ագրարային հարային» («Die Agrarfrage», S.67—68) («Ագրարային հարային» («Die Agrarfrage», S.67—68: Խմբ.): Իդեալ, նշենք կառուցկու հետայրությունը, եզ 67—68: Խմբ.): Իդեալ, նշենք կառուցկու հետայրությունը իր ուշագրավ հետաքրքրական հայտարարությունը իր ուշագրավ գրքի առաջարանի մեջ. «Յեթե ինձ հաջողվեց առաջարկված աշխատության մեջ զարգացնել նոր և արգասավոր մտքեր, ապա յես դրա համար յերախտապարտ ամենից առաջ իմ յերկու մեծ ուսուցիչներին. յես ամենից առաջ իմ յերկու մեծ այդ մանավանդ ավելի հոժարությամբ ընդուռում եմ այդ մանավանդ մեր զրջաններում ձայներ ին լսվաւմ, վորոնք Մարքսի ու Ենգելսի տեսակետը հայտարարում են հնացած . . . իմ կարծիքով, այդ սկսալությամբ կախումն ունի ավելի իմ կարծիքով, այդ սկսալությամբ կախումն ունի ավելի շատ սկեպտիկների անձնական առանձնահատկություններից, քան վիճարկվող ուսմունքի հատկություննե-

այդ բոլոր հայտարարությունները բոլորովին անհիմն են: Դրանք պատճառաբանություններ չեն, այլ զեկրետներ: Դրանք Մարքսի թեորիայի այն քննադատության կանխակալ արդյունքներն են, վորով մտադիր են զբաղվել նեռկանատական-

ըլց: Յես այդպիսի հետեւություն անում եմ վոչ միայն այն արդյունքների հիման վրա, վորոնք ստացվում են սկեպտիկների առարկությունների վերլուծումից, այլ նաև իմ սեփական փորձի հիման վրա: Իմ . . . գործունեցության սկզբում յես բնավլ չեյի համակրում մարդունից մին: Յես նրան վերաբերյալ եյի նռւյնպես քննադատորնեն և նռւյնպիսի անվատահությամբ, ինչպես այն անձնավորություններից վորևս մեկը, վորոնք այժմ արհամարհանքով վերնից են նայում իմ գործատիկական մոլեունդությանը: Վորոշ ընդդիմադրությունից հետո միայն յես մարքսիստ դարձաւ: Բայց թե այդ ժամանակ և թե հետագայում, — ամեն անգամ, յերբ կառակածներ եյի ունենում սկզբունքային վորևս հարցի մասին, — յես միշտ վերջիվերջո այն համոզմանն եյի գալիս, թե յես եյի սխալում, և վոչ թե իմ ուսուցիչները: Առարկայի ավելի խոր ուսումնասիրությունն ինձ հարկադրում եր նրանց տեսակետը միշտ համարել: Այսպիսով, առարկայի յուրաքանչյուր նոր ուսումնասիրում, իմ հայտցքների վերանայման յուրաքանչյուր փորձ ուժեղացնում եյին իմ վստահությունը, իմ մեջ ամրագնդում եյին այն ուսմունքի ճանաչումը, վորի տարածումն ու կիրառումը իմ կյանքի խնդիրը դարձավ:

ները\*, կապը ենք՝ կտեսնենք, թե ինչ կտա այդ  
քննադատությունը: Իսկ առայժմ արձանադրենք,  
վոր իրացման թեորիայի հարցում այդ քննադատ  
տությունը վոչինչ չի տվել:

7. «Կապիտալի» II հատորի III բաժնի մեջ  
Մարքսի բերած սխեմաների նշանակության հար-  
ցում Ստրուկեն պնդում ե, թե իրացման ար-  
տրակտ թեորիան կարելի յէ լավ շարադրել հասարա-  
կական արդյունքի բաժնաման ամենատարբեր յե-  
ղանակների միջոցով: Այս ապշեցուցիչ պնդումն ամ-  
բողջովին բացատրվում ե Ստրուկեյի այն հիմնա-

\* Իդեպ, մի յերկու խօսք այդ (ապագա) «քննա»  
գատության մասին, վորով այդպիս տարվում ե Ստրու-  
կեն: Քննադատության դեմ առհասարակ չի առարկի,  
ինարկի, վոչ մի առողջ մտածող մարդ: Բայց Ստրու-  
կեն, ըստ յերկութին, կրկնում ե իր սիրած միտքը  
մարքսիզմը «քննադատական փիլիսոփայությունով»  
արգասավորելու մասին: Յետ, հասկանալի յէ, վոչ ցան-  
կություն, վոչ ել հնարավորություն ունեմ այստեղ  
կության, մարքսիզմի փիլիսոփայութեան բովանդա-  
կանգ առնելու մարքսիզմի փիլիսոփայութեան հարցի  
կության հարցի վրա, այդ պատճառով ել կսահմա-  
նակի միայն հետյեւալ նկատումով: Մարքսի այն  
նախակիեմ միայն հետյեւալ նկատումով: Մարքսի կան-  
ացակիրուները, վորոնք կոչ են անում «հետ գեպի կան-  
տը», մինչև այժմ վոչինչ չտվին, վոր ապացուցեր, թե  
անրաժեշտ ե այդպիսի գարձը, և վորն ակնառու պատկի-  
րեր, թե Մարքսի թեորիան նեոլանտականությունով  
արգասավորվելուց շահելու յէ: Նրանք նույնիսկ չկատա-

կան թյուրիմացությամբ, իբր իրացման թեորիան  
«ամբողջությամբ սպառվում» ե (??!) այն տափակա-  
բանությամբ, թե արդյունքները փոխանակվուս  
են արդյունքներով: Միայն այդ թյուրամացու-  
թյան շնորհիվ ե, վոր Ստրուկեն կարող եր այս-  
պիսի մի ֆրազ գրել: «Թե վորն ե այդ» (իրաց-  
վող) «ապրանքային մասսաների դերը արտա-  
գրության մեջ բավարար մեջ ե այն, թե դրանք  
կատարած են արդյոք (Sic!!) և ինչպիսի, հաս-  
տատուն թե փոփոխուն, տվյալ թեորիայի եյու-  
թյան համար բոլորովին միենույն ե» (51): Մարքսի  
իրացման թեորիայի համար, վոր հասարակական

ըեցին ամենից առաջ իրենց վրա ընկնող պարտակա-  
նությունը՝ մանրամասն վերլուծել և հերքել նեռկան-  
տականության այն բացասական գնահատականը, վոր  
Ենգելման ե տվեր Ընդհակառակը, այն աշակերտները,  
վորոնք կետ գնացին վոչ թե դեպի կանոր, այլ՝ մի  
կողմից գեպի փիլիսոփայական մատերիալիզմը մինչև  
Մարքս, և մյուս կողմից գեպի զիալեկտիկական նիկա-  
լիզմը, տվյան զիալեկտիկական մատերիալիզմի զարմանա-  
լի կառուցիկ և արժեքավոր շարադրանքը, ցույց տվին,  
վոր այն՝ փիլիսոփայության և հասարակական գիտու-  
թյան նորագույն ամբողջ զարգացման որինական և  
անխառապելի արդյունքն ե, Բավական ե, վոր յետ  
գկայակոչեծ պ. Բելտովի հայտնի աշխատությունը ուու-  
սական գրականության մեջ և «Beiträge zur Geschichte  
der Materialismus» (Stuttgart 1896) գերմանական  
գրականության մեջ:

ամբողջ կապիտալի վերաբռնագրության և շրջանառության վերլուծությունն ե, միևնույն ե, ապրանքները կապիտալ են արդյոք։ Այդ միևնույն ե, թե զորես մեկն ասեր, թե հողային ունտայի թեորիայի ելության համար միևնույն ե՝ գյուղական ընականությունը բաժանվում ե արդյոք հողագործների, կապիտալիստների և բանվորների, թե զո՞ւ զորովճետես, իր ասելով, այդ թեորիան հանդում ե հողի տարբեր մասերի տարբեր արգավանդությունը նշելուն։

Միայն նույն թյուրիմացության շնորհիվ ե, զոր Ստրուվն կարող եր պնդել, թե «բնական փոխհարաբերությունը հասարակական սպառման տարբերի միջև—նյութերի հասարակական փոխանակությունը—ամենից ավելի լավ կարող ե ցույց տրվել» արդյունքի վոչ թե մարքսյան բաժանումն, այլ հետեւյալ բաժանման միջոցներ+սպառման միջոցներ+հավելյալ արժողություն (արժեք, եջ 50)։ Ի՞նչն ե նյութերի հասարակական փոխանակությունը։ Ամենից առաջ արտադրության միջոցները սպառման առարկաների հետ փոխանակելը։ Իսկ ի՞նչպես կարելի յե այդ փոխանակությունը ցույց տալ, հավելյալ արժեքը հատուկ առանձնացնելով արտադրության միջոցներից և սպառման առարկաներից։ Զե՞ զոր հավելյալ արժեքը մարմանում

ե կամ արտադրության միջոցների և կամ սպառման առարկաների մեջ։ Պարզ չե՞ միթե, զոր նման բաժանումը,—արտամաբանություն մնանկ (վորովինետև այն շփոթում ե արդյունքի բաժանումն ըստ բնական ձևի և բաժանումն ըստ արժեքի ըստ բնական ձևի (մթագնում ե նյութերի հասարակական փոխանակության պլոցեսը\*։

9. Ստրուվեն ասում ե, թե յես Մարքսին վերագրել եմ Սեյ-Ռիկարդոյի ջատագովական-բուրգուական թեորիան (52),—արտադրության ու սպառման միջև յեղած ներդաշնակության թեորիան (51),—Մարքսի ուսմունքի հետ աղաղակող հակասությունը ունեցող՝ կապիտալիզմի եվոլյուցի-այի և վերջնական անհետացման թեորիան (51—2)։ Թե այդ պատճառով իմ «կատարելապես իրավացի դատողությունն» այն մասին, թե Մարքսը թե Ⅱ և թե Ⅲ հատորի մեջ ընդգծում եր կապիտալիզմին հատուկ հակասությունը արտադրության անսահման ընդլայնման և ժողովրդագրության անսահման ընդլայնման և ժողովրդա-

\*Հեշեցնենք ընթերցողին, զոր Մարքսը հասարակական ամբողջ արդյունքը բաժանում է յերկու ստորաբաժանման ըստ արդյունքի բնական ձևի՝ 1) արտադրության միջոցներ, 2) սպառման առարկաներ։ Հետո այդ ստորաբաժանումներից յուրաքանչյուրում շետա այդ ստորաբաժանումներից յուրաքանչյուրում արդյունքը բաժանվում է յերեք մասի ըստ արժեքի տարրերի՝ 1) հաստատուն կապիտալ, 2) փոփոխուն կապիտալ, 3) գերարժեք։

կամ մասսաների սահ. անափակ սպառման միջև,  
«բոլորովին մի կողմ ենետում իրացման այն թե-  
որիան»... վորի պաշտպանը այլ դեպքերում» յես  
եմ:

Ստրուվեյի այս պնդումն ել ճիշտ նույնպես  
սխալ եւ և ճիշտ նույնպես հիմնված եւ վերոհի-  
շյալ այն թյուրիմացության վրա, վորի մեջ նա  
ընկել եւ:

Ստրուվեն վճրուեղից եւ վերցրել, թե յես իրաց-  
ման թեորիա ասելով հասկանում եմ վոչ թե հասա-  
րակական ամբողջ կապիտալի վերաբարերության  
ու շրջանառության պրոցեսի վերլուծությունը,  
այլ այն թեորիան, վորն ասում եւ միայն, թե ար-  
դյունքները փոխանակվում են արդյունքներով,  
այն թեորիան, վոր ուսուցանում եւ արտադրու-  
թյան ու սպառման միջև յեղած ներդաշնակու-  
թյան մասին: Ստրուվեն իմ հոդվածների քննարկ-  
մամբ չեր կարողանա ցույց տար, թե յես իրաց-  
ման թեորիան յերկրորդ իմաստով եյի հասկա-  
նում, վորովհետև յես ուղղակի և վորոշակի ասում  
եյի, թե իրացման թեորիան հասկանում եմ  
հենց առաջին իմաստով: «Ծնտեսագիտական  
ուոմանստիզմի բնութագրման վերաբերյալ» հոդ-  
վածում, այն պարբերության մեջ, վոր նվիրված  
է Սմիթի և Սիսմոնդիի սխալը պարզելուն, ասում  
եւ «Հարցը հենց այն եւ, թե ինչպես եւ կատարվում

իրացումը, այսինքն հասարակական արդյունքի  
բոլոր մասերի փոխարինումը: Ուստի հասարակա-  
կան կապիտալի և յեկամտի մասին, —կամ վոր  
նույն եւ՝ կապիտալիստական հասարակության  
մեջ արդյունքի իրացման մասին,—դատողության  
մեջ յեկալետ պետք եւ լինի արտադրության  
միջոցների և սպառման առարկաների... բաժա-  
նումը» («Ետյուղներ», 17)\*: «Իրացման հարցի  
եյությունն ել այն ենենց, վոր վերլուծվի հասա-  
րակական արդյունքի բոլոր մասերի փոխարինումն  
ըստ արժեքի և ըստ նյութական ձեի» (ib. 26)\*\*:  
ըստ արժեքի և ըստ նյութական ձեի» (ib. 26)\*\*:  
Նույնը չի կրկնում արդյոք Ստրուվեն, յերբ  
ասում եւ, —իբրև թե իմ դեմ, —թե մեզ հետաքրքրու-  
թեորիան «ցույց ետալիս իրացման մեխանիզմ»...  
վորքանով վոր այդպիսի իրացումն իրագործվում  
է» («Հ. օճ.», 62): Հակասում եմ արդյոք յես  
իրացման այն թեորիային, վորը յես պաշտպանում  
եմ, յերբ ասում եմ, թե իրացումը կատարվում  
է «միայն դժվարությունների մեջ, մշտական տա-  
պանումների մեջ, վորոնք կապիտալիզմի աճմամբ  
զնալով ավելի ուժեղանում են, կատաղի մրցման մեջ  
և այլու» («Ետյուղներ», 27)\*\*\*—յերբ ասում եմ, թե  
և այլն» («Ետյուղներ», 27)\*\*\*—յերբ ասում եմ, թե

\* Յերկերի հ. II, հրատ. 1930 թ., եջ 24: Խմբ.:

\*\* Նույն տեղում, եջ 32: Խմբ.:

\*\*\* Նույն տեղում, եջ 33: Խմբ.:

կյանքում յեղած բոլոր հակասությունների ճիշտ պատկերը։ Այդ պատճառով ել անհաջող մնում են և կմնան «Մաքքսի սիստեմը» յուրացնելու բոլոր փորձերը, առանց նրա «բանավիճային բնույթը» յուրացնելու սիստեմի «բանավիճային բնույթը» կապիտալիզմի իր «բանավիճային բնույթի» ճիշտ արտացոլումն եւ։

10. «Վ՞ի՞ն ե իրացման թեորիայի ոեալնշանակությունը»—հարցնում ե Ստրուվեն և բերում պ. Բուլգակովի կարծիքը, վորն ասում ե, թե կապիտալիստական արտադրության ընդլայնման հնարավորությունն իրագործնվում ե իրոք, թեպետև մի շարք ճնաժամերով։ «Կապիտալիստական արտադրությունն աճում ե ամբողջ աշխարհում», — նշում ե պ. Բուլգակովը։ «Այդ պահառաբանությունը, — առարկում ե Ստրուվեն, — լիովին մնանկ ե։ Բանն այն ե, վոր «կապիտալիստական արտադրության» ոեալ «ընդլայնումը» կատարվում ե քնավ վոչ այն իդեալական և մեկուսացած կապիտալիստական պետության մեջ, վոր Բուլգակովը ե յենթադրում ե վորը, նրա յենթադրությամբ, քավում ե իրեն, այդ համաշխարհային տնտեսության ասպարիզում, վորոնեղ բաղկավում են տնտեսարուների կլասիկ որինակը, վորը միտումավորություն ե տեսնում Մաքքսի շահույթի միջին նորմայի թեորիայի մեջ։

սական զարդացման ամենաբազմազան աստիճանները և տնտեսական կենցաղի տարբեր ձևերը »(57)։

Այսպիսով, Ստրուվեյի առարկությունը հանգում ե այն բանին, թե իրացումն իրականում կատարվում ե վոչ թե մեկուսացած, ինքնաբավկապիտալիստական պետության մեջ, այլ «համաշխարհային տնտեսության ասպարիզում», այսինքն արդյունքներն ուրիշ յերկիրներ վաճառահանելու միջոցով։ Հեշտ ե տեսնել, վոր այդ առարկությունը հիմնված է սխալի վրա։ Վորեւ է չափով կփոխվի արդյոք իրացման հարցը, յեթե մենք չսահմանափակվենք ներքին շուկայով («Ի՞նքնաբավկապիտալիզմ»), այլ դիմենք արտաքինին, յեթե մենք մի յերկը փոխարեն վերցնենք մի-քանիսը։ Յեթե մենք չմտածենք, թե կապիտալիստներն իրենց ապրանքները ծովն են գցում, կամ ձրիաբար տալիս ստրերկրացիներին, — յեթե մենք չվերցնենք հատուկենստ, բացառիկ կամ ժամանակաշրջանները, ապա զեպքերը կամ ժամանակաշրջանները, ապա ալիսերն ե, վոր պետք ե ընդունենք ներմուծման և արտածման վորոշ հավասարաչափությունը։ Յեթե տվյալ յերկիրն արտահանում ե վորոշ արդյունքները՝ դրանք իրացնելով «համաշխարհային տնտեսության ասպարիզում», ապա դրա փոխարեն նա ներմուծում ե ուրիշ արդյունքներ։ Ուեալացման թեորիայի տեսակետից, ան-

հրաժեշտ ե ընդունել, վոր «արտաքին առևտուրը բնաշխարհիկ շինվածքները (Artikel—ապրանքներ) միայն փոխանորդում ե ուրիշ սպառողական կամ բնական ձևի շինվածքներով» («Das Kapital», II, 469, իմ մեջը՝ «Ի. օ6.», եջ 38)\*:

Վերցնում ենք մենք արդյոք մի յերկիր, թե յերկրների մի կոմպլեքս, դրանից իրացման պրոցեսի եյությունը բնակ չի փոխվում: Պահուզակովին արած իր առարկության մեջ Ստրուկն, հետևաբար, կրկնում ե նարոդնիկների հին սխալը, վորոնք իրացման հարցը կապում եցին արտաքին շուկայի հարցի հետ\*\*:

Իրոք այդ հարցերի միջն վոչ մի ընդհանուր բան չկա: Իրացման հարցը կապիտալիզմի թերիային առհասարակ վերաբերող մի արտարակա հարց ե: Վերցնում ենք մենք արդյոք մի յերկիր, թե ամբողջ աշխարհը, իրացման հիմնական որենքները, վորը Մարքսն ե հայտաբերել, նույնն են մասում:

Արտաքին առևտորի կամ արտաքին շուկայի հարցը պատմական հարց ե, կապիտալիզմի դարձացման կոնկրետ պայմանների հարցն ե

\* Տես ներկա գրքուկի եջ 4: Խմբ.: Դ.

\*\* Նարոդնիկների այդ սխալի քննակումը յետ կատարել եմ «Ետյուզների» մեջ, եջ 25—39 («Յերկերի Ատտ., 3-րդ հրատ. 1930 թ., եջ 32—35, Խմբ.):

այս կամ այն յերկրում, այս կամ այն ժամանակաշրջանում\*:

11. Միքիչ ել կանգ առնենք այն հարցի վրա, վորը «վաղուց զբաղեցնում ե» Ստրուկեյին՝ վարն ե իրացման թեորիայի ոեալ-գիտական արժանիքը:

Բոլորովին նույնը, ինչ արժողություն վոր ունեն Մարքսի աբստրակտ թեորիայի մյուս բոլոր դրույթները: Յեթե Ստրուկեյին շփոթեցնում ե այն հանդամանքը, վոր «լիակատար իրացումը կապիտալիստական արտադրության իդեալն ե, բայց պոչ յերբեք նրա իրականությունը», ապա մենք նրան կհիշեցնենք, վոր կապիտալիզմի մյուս բոլոր որենքներն եր վոր Մարքսն ե հայտաբերել, լոր ապահովելու նույնպես պատկերում են միայն կապիտալիզմի իդեալը, բայց վոչ յերբեք նրա իրականությունը: «Մենք նպատակ ունենք,—զրում եր թյունը: «Մենք նպատակ ունենք, —զրում եր թյունը: «Մենք նպատակ ունենք, կապիտալիստական յեւ Մարքսը, —արտադրության կապիտալիստական յեղանակի ներքին կազմակերպությունը ներկայացնել միայն նրա, այսպես ասած, միջին-իդեալական տիպով» («in ihrem idealen Durchschnitt» «Das Kap.», III, 2, 367, ուռւ. Թարգմ. եջ 688): Կապիտալի թեորիան յենթադրում ե, թե բանկորն ստանում ե իր աշխատուժի լրիվ արժեքը: Այդ՝

\* Ibid. հմմտ. «Ի. օ6.» Խ 1, եջ 37 (ներկա գրքույղի եջ 3: Խմբ.):

Ընդլայնված վերաբռնագրությունն անհնարին և,  
«վորովհետև անպայման անհրաժեշտ լրացուցիչ  
բանվորներ վերցնելու տեղ չկա»։

Յես վոչ մի կերպ չեմ կարող համաձայնել  
Ստրուվեյի այդ անդմանը։ Պահեստային բանա-  
կից լրացուցիչ բանվորներ վերցնելու անհնա-  
րինությունը Ստրուվեն չապացուցեց, և չի ել  
կարելի այդ ապացուցել։ Վոր լրացուցիչ բան-  
վորներ կարող են վերցվել բնակչության բնա-  
կան աճից, դրա դեմ Ստրուվեն բոլորովին մեր-  
կախու հայտարարում են, թե «բնական աճի  
վրա հիմնված ընդլայնված վերաբռնագրությունը  
թվաբանորեն գուցե և նույնը չե, ինչ վոր  
պարզը, բայց գործնականորեն-կապիտալիստորեն,  
այսինքն տնտեսագիտորեն, լիովին համընկնում  
և նրա հետ»։ Զգալով, վոր տեսականորեն չի  
կարելի ապացուցել լրացուցիչ բանվորներ գըտ-  
նելու անհնարինությունը, Ստրուվեն խուսա-  
փում ե հարցից, առկոչելով պատմական ու  
գործնական պայմանները։ «Յես չեմ կարծում,  
թե Մարքսը կարողանար պատմական (?) հար-  
ցը լուծել այդ՝ բոլորովին արստրակո՞ կոնս-  
տրուկցիայի հիման վրա»։ «Ինքնաբավ կա-  
պիտալիզմը պատմականորեն (!) անմտածելի մի  
սահման ե»։ «Աշխատանքի ինտենսիվացումը,  
վոր կարելի յե բանվորի լնքին փաթաթել վոչ

միայն ուեալ կերպով, այլև տրամաբանորեն  
դրված և չափազանց նեղ սահմանների մեջ»։  
«Աշխատանքի արտադրողականության անընդհատ  
բարձրացումից չի կարող չթուլացվել աշխա-  
տանքի հարկադրանքն ինքը»։

Այդ բոլոր պնդումների պնտրամաբանու-  
թյունը աչք է ծակում։ Ստրուվեյի ընդդիմա-  
խումներից վոչ վոչ մի տեղ և յերբեք չի  
ասել այնպիսի անհեթեթություն, թե պատմա-  
կան հարցը կարելի յե լուծել արստրակո կոնս-  
տրուկցիաների ոգնությամբ։ Բայց նեկայումն  
Ստրուվեն ինքը գրեց բնակ վոչ պատմական,  
այլ բոլորովին արստրակո մի հարց, զուտ տե-  
սական մի հարց «իդեալական կապիտալիստական  
հասարակության վերաբերյալ» (57)։ Պարզ չե  
միթե, վոր նա պարզապես խուսափում է հար-  
ցից։ Վոր գոյություն ունեն բազմաթիվ պատ-  
մական և գործնական պայմաններ (չխոսելով  
արդեն կապիտալիզմի ներկա հակասությունների  
մասին), վորոնք տանում են և կտանեն ավելի  
շուտ գետի կապիտալիզմի կործանումը, քան գե-  
տի ժամանակակից կապիտալիզմի՝ իդեալական  
կապիտալիզմի փոխարկվելը—այդ յես, ինարկե,  
չեմ ել մտածում ներքել։ Բայց «իդեալական  
կապիտալիստական հասարակության վերաբերյալ»  
զուտ տեսական հարցում յես իմ նախկին

այն կարծիքին եմ, թե տեսական վոչ մի հիմք չկա նման հասարակության մեջ ընդլայնված վերարտադրության հարավորությունը ժխտելու:

13. «Պարագաները մեջ նշումը մուռաստանի կապիտալիստական զարգացման մեջ նշեցին հակառակություններն ու գայթակղության կետերը՝ իսկ նրանց ցույց են տալիս Մարքսի սխեմաները և տում կապիտալիստը միշտ փոխանակվում են կապիտալիստով» (Մարքսի մեջբարձր, 62):

Այդ չափագանց կծու յե ասված: Ափսոս միայն, վոր դրա հետ մեկտեղ բոլորովին սխալ եղատկերացված գործը: Ամեն վոք, ով կարդա պարագաների «Օчерки теоретической экономии» («Թեորիական տնտեսության ռւրգագծեր») և պ. Ն—ոնի «Օчерки»-ի («Արգագծերի») յերկրորդ բաժնի § XV-ը, կտեսնի, վոր այդ յերկու գրողներ նենց դրել են իրացման արստրակալո-թեորետիկ հարցը, արդյունքի իրացման հարցը կապիտալիստական հաստրակության մեջ ընդհանրապես: Այդ գաստեա: Փաստ ենույնպես այն հանգամանքը, վոր նրանց դեմ մյուս գրողները «անհրաժեշտ համարեցին ամենից առաջ պարզել շուկաների թեորիայի հիմնական, արստրակալո-թեորետիկ կետերը» (ինչպես գրված և «Ա. օֆ»-ի իմ հոդվածի հենց առաջին տողերում): Տուգան-Բարանովսկին

իրացման թեորիայի մասին գրել ե ճնշաժամերի մասին իր գրքի այն գլխում, վորը «շուկաների թեորիա» յենթավերնագիրն ունի: Բուլգակովն իր գրքին «տեսական ետյուդ» յենթավերնագիրն ե տալիս: Հարց ե ծագում մի և ուրեմն շփոթում արստրակալո-թեորետիկ և կոնկրետ-պատմական հարցերը, Մարքսի ընդդիմակառուները, թե ինքն Մարուվեն:

Իր հոդվածի նույն եջում Մարքսին բերում ե իմ նշումը, թե արտաքին շուկայի անհրաժեշտությունը բղխում ե վոչ թե իրացման պայմաններից: «Բայց,— առարկում ե Մարքսին (շատ բնորոշ ե այդ քրայց»-ը),—Տուգան-Բարանովսկին, Բուլգակովը իւլինը իրացման արստրակալո պայմաններն են և կայսեր պարզել, իսկ պատմական պայմանները չեն պարզել» (եջ 62):—Հիշված բոլոր գրողները նենց նրա համար չեն պարզել պատմական պայմանները, վոր նրանք հանձն եյին տուել խոսել արդյունքի մասին: Իւ «Կառուսու օ развитии капитализма в России» («О внутреннем рынке для крупной промышленности и о процессе ее образования в России») («Կապիտալիզմի զարգացման հարցի վերաբերյալ՝ Մուռաստանում» («Մուռաստանում իուզոր արդյունա-

բերության համար ներքին շուկայի և նրա գոյացման պլոցեսի մասին»)) գրքում, վորը ներկայումս (III, 99) արդեն տպագրված է, յես հարցը դնում եմ վոչ թե շուկաների թեորիայի մասին, այլ ոռւսական կապիտալիզմի ներքին շուկայի մասին։ Ուստի թեորիայի արատը ակտ ճշմարտություններն այստեղ խաղում են միայն դեկավարող զրոյթների դեր, միայն գործիքների դեր կոնկրետ տվյալների վերլուծության համար։

14. Ստրուվին «ամբողջովին պաշտպանում ե» իր «տեսակետը» «յերրորդ անձերի» թեորիայի մասին, վոր ինքը առաջարել եր «Քննադատ դիտողություններում»։ Յես, իմ հերթին, ամբողջովին պաշտպանում եմ իմ առաջն այդ առթիվ այն ժամանակ, յերբ լույս տեսակ «Քննադ. դիտողությունները»\*։

Ստրուվին «Քնն. դիտ.» 251-րդ եջում ասում

\* Այսինքն «Экономическое содержание народничества и критика его в книге Струве» («Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Ստրուվի գրքում») հողվածում (տես Յերկերի I հատոր), վորը հեղինակը չեր կարող մեջ բերել, վորովհետեւ գրաքննությունը վոչնչացրել եր մարքսիստական այն ժողովածուն, վորի մեջ նա տպագրված եր Խմբ։

ե, թե Վ. Վ. Վ. պատճառաբանությունը «հենվում է կապիտալիստական հասարակության մեջ կազմակորված շուկաների մի ամբողջ յուրահատուկ թեորիան, նկատում է Ստրուվին, — ձիշտ ե, վորքան վոր արձանագրում ե այն փաստը, վոր հավելյալ արժողությունը (արժեքը) չի կարող իրացվել վոչ կապիտալիստաների, վոչ ել բանվորների սպառման մեջ, այլ յենթազրում ե յերրորդ անձնավորությունների սպառումը»։ Ստրուվին այդ յերրորդ անձեր ասելով «հասկանում ե ոռւսական հողագործ գյուղացիությունը» («Ա. օճ.» հոդվածի եջ 61)։

Այսպես պ. Վ. Վ. առաջ ե քաջում շուկաների մի ամբողջ յուրահատուկ թեորիա՝ կազմակորված կապիտալիստական հասարակության մեջ, իսկ նրան ոռւսական հողագործ գյուղացիությունն են նշում, Միթե այս իրացման աբստրակտ-թեորետիկ հարցի շփոթումը չե կապիտալիզմի կոնկրետ-ալատումական հարցի հետ Ռուսաստանում։ Հետո, յեթե Ստրուվին պ. Վ. Վ. թեորիան թեկուղ մասամբ ձիշտ ե համարում, — նշանակում ե՝ նա անցնում ե պ. Վ. Վ. ի հիմնական առական սխալների մոտով իրացման հարցում, այն սխալ հայացքի մոտով իրը կապիտալիստական իրացման «դժվարությունները» սահմա-

Նախակվում են հավելյալ արժեքով կամ հատկապես կազմում են արդյունքների արժեքի այդ մասի հետ—այն սխալ հայացքի մոռով, վորը արտաքին շուկայի հարցը կազմում ե իրացման հարցի հետ:

Ստրուկեյի նշումը, թե ուստական հողագործ գյուղացիությունը իր տարբալուծումով շուկայե ստեղծում մեր կապիտալիզմի համար,— լիովին ճիշտ ե (վերը հիշված գրքում յես այդ գրույթը մանրամասն առացուցում եմ զեմստվային վիճակագրության տվյալների վերլուծումով): Բայց այդ գրույթի տեսական հիմնափորումը բնակ արդյունքի իրացման թեորիային չի վերաբերում՝ կապիտալիստական հասարակության մեջ, այլ վերաբերում ե կապիտալիստական հասարակության կազմակորման թեորիային։ Զի կարելի չնկատել նույնպես, փոր գյուղացիներին «յերրորդ անձեր» անվանելը շատ անհաջող ե և ընդունակ ե թյուրիմացություններ առաջ բերելու։ Յեթե գյուղացիները կապիտալիստական արդյունաբերության համար «յերրորդ անձեր» են, ապա արդյունաբերողները, մանր թե մեծ, ֆաբրիկաներներն ու բանվորները «յերրորդ անձեր» են կապիտալիստական հողագործության համար։ Մյուս կողմից, գյուղացի հողագործները («յերրորդ անձերը») կապիտալիզմի

համար շուկա յեն ստեղծում միայն այն չափով, վորչափով կապիտալիստական հասարակության դասակարգերի (գյուղական բուրժուազիայի և գյուղական պրոլետարիատի) յեն տարրալուծում, այսինքն այն չափով, վորչափով դադարում են «յերրորդ» անձեր լինելուց, այլ դառնում են գործող անձեր կապիտալիզմի սխալմում։

15. Ստրուկեն ասում եր «Բուլգակովը նույն նկատողություն ե անում, թե կապիտալիստական արտադրության համար ներքին ու արտաքին շուկայի միջև վոչ մի ակզբունքային տարբերություն չի կարելի սահմանել։ Յես բոլորավին մաքանում եմ այդ նկատողությանը. իրոք մաքային կամ քաղաքական սահմանը շատ հաճախ բոլորավին անպետք ե «ներքին» ու «արտաքին» շուկայի բաժններում համար։ Բայց, հենց նոր նշած պատճառներով, յես չեմ կարող Ստրուկեյի հետ համաձայնել թե «գրանից բղխում ե մի թեորիա, փորը պնդում ե յերրորդ անձերի անհրաժեշտությունը»։ Դրանից անմիջականորեն բղխում ե միայն մի պահանջ՝ կապիտալիզմի հարցը քննելիս կանգ չառնել ներքին ու արտաքին շուկաների ավանդական բաժններում առջև։ Խիստ թեորիական տեսակետից մնանկ՝ այդ բաժննումն առանձնապես բիչ ե պետքական այնպիսի յերառանձնապես

կըրների համար, ինչպիսին թուսաստանն եւ Կարելի կլիներ այն մի ուրիշ բաժանումով փոխարինել հետևյալ կողմերը տարբերելով, որինակ, կապիտալիզմի զարգացման պրոցեսում. 1) կապիտալիստական հարաբերությունների դոյացում և զարգացում տվյալ բոլորվին բնակեցված և բռնված տերիտորիայի սահմաններում. 2) կապիլիզմի ընդայնում ուրիշ տերիտորիաների վրա (վորոնք մասամբ ամենեին բռնված չեն և բնակեցվում են հին յերկրից յեկածներով, մասամբ բռնված են համաշխարհային շուկայից և համաշխարհային կապիտալիզմից հեռու կանգնած ցեղերով): Պրոցեսի առաջին կողմը կարելի կլիներ անվանել կապիտալիզմի զարգացում խորությամբ, յերկրորդը՝ կապիտալիզմի զարգացում լայնությամբ\*: Այդպիսի բաժանումը կընդգրկեր կապիտալիզմի պատմական զարգացման ամբողջ պրոցեսը՝ մի կողմից նրա զարգացումը հին յերկըրներում, վորոնք դարեր շարունակ մշակել են կապիտալիստական հարաբերությունների ձևեր

\* Ինքնին հասկանալի յէ, վոր իրականում յերկու կողմը սերտ միաձուլված են, և նրանց բաժանումը միայն աբստրակցիա յէ, միայն բարդ պրոցեսի ուսումնասիրման յեղանակ: Վերը հիշված գիրքը յես նվիրել եմ բացառապես պրոցեսի առաջին կողմին, տես այնտեղ, գլ. VIII, § 5:

մինչև մեքենայական խոշոր ինդուստրիան ներառյալ, մյուս կողմից՝ զարգացած կապիտալիզմի հզոր ձգտումը՝ ընդլայնվել ուրիշ տերիտորիաների վրա, բնակեցնել ու հերկել նոր աշխարհամասեր, հիմնել գաղութներ, վայրենի ցեղերը ներքաշել համաշխարհային կապիտալիզմի հորձանքի մեջ: Ռուսաստանում կապիտալիզմի այդ վերջին ձըգտումը առանձնապես ցայտուն կերպով արտահայտվում եր և շարունակում ե արտահայտվել մեր ծայրագավառներում, վորոնց գաղութացումը այնքան հսկայական զարկ ստացավ ուստական պատմության հետուեֆորմյան, կապիտալիստական ժամանակաշրջանում: Հարավային Ռուսաստանի հարավը ու հարավարեկելքը, Կովկասը, Միջին Ասիան, Սիբիրը ուստական կապիտալիզմի համար մի տեսակ գաղութներ են և նրան հսկայական պարգացում են ատահովում վոչ միայն խորությամբ, այլև լայնությամբ:

Վերջապես, առաջարկվող բաժանումը նրանով ե հարմար, վոր խստորոշ սահմանում ե հարցերի այն բնագավառը, վորը հենց ընդգրկում ե իրացման թեորիան: Պարզ ե, վոր այդ թեորիան վերաբերում ե պրոցեսի առաջին միայն, միայն կապիտալիզմի զարգացմանը խորությամբ: Իրացման թեորիան (այսինքն հասարակական ամբողջ կապիտալի վերաբարերությունն ու

շրջանառությունը պարզաբանող թերիան) իր  
կառուցումների համար պետք է անհրաժեշտա-  
բար վերցնի կապիտալիստական ինքնամփոփ  
հասարակությունը, այսինքն աբստրահի կապի-  
տալիզմի՝ ուրիշ յերկրների վրա ծավալվելու  
պրոցեսը, մեկ յերկրի ապրանքային փոխանա-  
կության պրոցեսը մի ուրիշի հետ, փորովինետև  
այդ պրոցեսը իրացման հարցը լուծելու համար  
փոչինչ չի տալիս, հարցը միայն դարձնելով մի  
յերկրից միքանի ուրիշ յերկրների վրա։ Պարզ է  
հունապես, վոր իրացման աբստրակտ թերիան  
պետք է իրրև գրյալ վերցնի իդեալականորեն  
զարգացած կապիտալիստական հասարակությու-  
նը։

Խոսելով մարքսիզմի գրականության մասին,  
Ստրուվին հետեւյալ ընդհանուր նկատողությունն  
է անում «Որթոդոքսալ փոխերգությունները  
տակավին շարունակում են տիրող լինել բայց  
զրանք չեն կարող խլացնել քննադատական նոր  
հոսանքը, փորովինետև գիտական հարցերում  
խսկական ուժը միշտ քննադատության կողմն է,  
և վոչ թե հավատի»։ Ինչպես նախընթաց շա-  
րադրանքից յերենում, հարկ յեղափ, վոր մենք  
համոզվենք, վոր «քննադատական նոր հոսանքը»  
չի ապահովում հին սխալները կրկնելուց։ Վոչ,  
լավ այն է, վոր արի մասնք «որթոդոքսիայի

նշանի տակ»։ Զհավատանք, թե որթոդոքսիան  
թույլ է տալիս վորեն բան ճիշտ ընդունել,  
առանց քննելու, թե որթոդոքսիան բացառում  
է քննադատական կերպարանափոխումը և հե-  
տագա զարգացումը, թե նա թույլ է տալիս  
պատմական հարցերն աբստրակտ սխեմաներով  
ծածկել Յեթե կան որթոդոքսալ աշակերտներ,  
փորով այդ իսկապես ծանր մեղքերի տեղն  
են, ապա մեղքն ամբողջությամբ այդպիսի  
աշակերտների վրա յե ընկնում և վոչ յերբեք  
աշակերտների վրա, վորը տրամադրուեն հա-  
կառիլ հատկություններով և աչքի ընկնում։

Գրված է 1899 թ. մարտին։  
Տպագրված է «Научное обозрение»-յում  
№ 8—1899 թ. ոգոստուն։  
Ստորագրությունը՝ Վ. Իլին։

## ՊԱՏՍ.ՍԽԱՆ պ. Պ. ՆԵԺԴԱ.ՆՈՎԻՆ

«Հիշնե»-ի № 4-ում պ. Պ. Նեժդանովը քննարկում ե իմ և ուրիշ հեղինակների հոդվածները շուկաների թեորիայի մասին։ Յես մտադիր եմ պատասխանել պ. Պ. Նեժդանովի միայն մի պնդմանը, հենց այն բանին, վոր յես «Հայучное обозрение»-յի այս տարվա № 1-ի միջի իմ հոդվածով «խեղաթյուրել եմ իմ պայքարը յերրորդ անձերի թեորիայի դեմ»։ Ինչ վերաբերում ե շուկաների թեորիայի վերաբերյալ պ. Պ. Նեժդանովի դրած մնացած հարցերին և մասնավորապես Պ. Բ. Ստրուկեյի հայացքներին, ապա յես կսահմանափակվեմ առկոչելով իմ հոդվածն ի պատասխան Ստրուկեյին («Դարձյալ իրացման թեորիայի հարցի վերաբերյալ») դրա տպագրումը «Հայучное обозрение»-յում դանդաղեց հեղինակից անկախ պատճառներով։

Պ-ն Պ. Նեժդանովը պնդում ե, թե «կապիտալիստական արտադրությունը արտադրության և սպառման վոչ մի հակասությամբ չի տառապում»։

Սրանից նա հետեւնում ե, վոր այդ հակասությունն ընդունելով, «Մարքոս ներքին լուրջ հակասությամբ եր տառապում» և վոր յես կըրկնում եմ Մարքոսի սխալը։

Յես պ. Պ. Նեժդանովի կարծիքը համարում եմ բոլորովին սխալ (կամ թյուրիմացության վրա հիմնված) և Մարքոսի հայացքների մեջ վոչ մի հակասություն չեմ կարող տեսնել։

Պարոն Պ. Նեժդանովի պնդումը, թե կապիտալիզմի մեջ վոչ մի հակասություն չկա արտադրության և սպառման միջև, այնքան տարորինակ ե, վոր այդ կարելի յե բացատրել միմիայն այն բոլորովին հասուկ իմաստով, վոր նա տվել ե «հակասություն» հասկացողությանը։ Պ-ն Պ. Նեժդանովը մտածում ե հենց, թե «քանի վոր իրոք հակասություն գոյություն ունի արտադրության և սպառման միջև,—այդ հակասությունը պետք ե սիստեմատիկորեն ավելցուկային արդյունք տա» (եջ 301. նույնը և յեղրափակման թեղիններում, եջ 316)։ Այդ բոլորովին քմահաճ և, ըստ իս, բոլորովին սխալ մեկնություն ե։ Քննադատելով իմ պնդումները կապիտալիստական հասարակության մեջ արտադրության և սպառման միջև գոյություն ունեցող հակասության մասին, պ. Պ. Նեժդանովը պետք ե (կարծում եմ) ընթերցողին շարադրեր, թե յես ինչպես եմ հասկանում

այդ հակասությունը, չսահմանափակվելով այդ  
հակասության եյության ու նշանակության մա-  
սին իր հայացքը շարադրելով։ (Իմ գեմ պ., Պ.  
Նեժանովի բանավեճը հարուցած) հարցի ամ-  
բողջ եյությունն այն ե հենց, վոր յես քննարկ-  
վող հակասությունը հասկանում եմ բոլորովին  
վոչ այնպես, ինչպես այն պ. Պ. Նեժանովին  
ուզում հասկանալու Յես վոչ մի տեղ չեմ ասել,  
թե այդ հակասությունը պետք ե սիստեմա-  
տիկորեն\* ավելցուկային արդյունք տա. յես այդ  
չեմ կարծում, և Մարքսի խոսքերից չի կարելի  
այդպիսի հայացք հետևցնել։ Արտադրության  
և սպառման միջի յեղած՝ կապիտալիզմին հատուկ  
հակասությունն այն ե, վոր արտադրությունն  
աճում ե աճապին արագությամբ, վոր մրցումը  
նրան անսահման ընդլայնման տեսնդենց ե  
հաղորդում, մինչդեռ սպառումը (անձնական), յե-  
թե աճում ել ե, ապա չափազանց թույլ ժո-  
ղովրդական մասսաների սկրոլետարական վիճակը  
հնարավորություն չի տալիս, վոր արագ աճի

\*Սիստեմատիկորեն ընդգծում եմ, վորովհետեւ կա-  
պիտալիստական հասարակության մեջ ավելցուկային  
արդյունքի վոչ-սիստեմատիկորեն արտադրությունը  
(ճնաժամերը) անխուսափելի յե արդյունաբերության  
դանագան ճյուղերի միջև յեղած համամասնականու-  
թյան խթանման հետևանքով, իսկ սպառման վորոշ  
վիճակը հաժամանահանության տարրերից մեկն ե.

անձնական սպառումը։ Ինձ թվում ե, վոր ամեն  
վոք, — ով ուշադրությամբ կարդացել ե իմ  
«Ետյուղների» (հոդված սիմոնդիսաների մասին,  
վորից մեջբերում ե անում պ. Պ. Նեժանովը)  
20-րդ և 30-րդ եջերը և «Научное обозрение»-ի  
(1899 թ., №1) 40-րդ եջը\*, կհամոզվի, վոր յես  
ոկզբից իսկ միմինյն այսպիսի իմաստ եմ տվել  
արտադրության և սպառման միջև յեղած հակա-  
սությանը կապիտալիզմի մեջ։ Յեվ այդ հակասու-  
թյանն ուրիշ իմաստ չի ել կարելի տալ, յեթե խս  
տուրեն հետեւնը Մարքսի թեորիային։ Արտադրու-  
թյան և սպառման միջև յեղած՝ կապիտալիզմին  
հատուկ հակասությունն այն ելուի վոր աճում և  
ազգային հարստությունը ժողովրդական չքավո-  
րության աճման կողքին, աճում են հասարա-  
կության արտադրողական ուժերը՝ առանց ժողո-  
վրդական սպառման համապատասխան աճման,  
առանց այդ արտադրողական ուժերն աշխատավոր  
մասսաների ոգտին գործի դնելու։ Այդ իմաստով  
հասկացվող՝ քննարկվող հակասությունը վորեն  
տարակույան չենթարկվող, միլիոնավոր մարդկանց  
ամենուրյա փորձով հաստատվող մի վաստ ե, և  
հենց այդ վաստի դիտումն ե աշխատավորներին  
հանգեցնում այն հայացքներին, վորոնք լիսկա-

\* Տես Յերկերի II հատ. 3-րդ հրատ., 1930թ. (ոռու.),  
էջ 27 և 36 և ներկա դրվույկի 10—11 եջերը։ Խմբ.:

տար և գիտական արտահայտություն են գտել Մարքսի թեորիայի մեջ։ Այդ հակասությունը բնավ չի տանում անհրաժեշտաբար դեպի այն, վոր սիստեմատիկորեն ավելցուկային արդյունք արտադրվեր (ինչպես ցանկանում ե կարծել պ. Պ. Նեժդանովը)։ Մենք կապիտալիստական հասարակության մեջ ամբողջ արդյունքի իրացումը լիովին կարող ենք պատկերացնել (զուտ թեորետիկորեն դատելով իդեալական կապիտալիստական հասարակության մասին) առանց վորևե ավելցուկային արդյունքի, բայց մենք չենք կարող կապիտալիզմը պատկերացնել առանց նրա, վոր անհամապատասխանություն լինի արտադրության և սպառման միջև։ Այդ անհամապատասխանությունը արտահայտվում ե այն բանով, ինչպես պարզ ցույց ե տվել Մարքսն իր սխեմաներում), վոր արտադրության միջոցների արտադրությունը կարող ե և պետք ե անցնի սպառման առարկաների արտադրությունից։

Այսպիսով, պ. Նեժդանովը բոլորսին սխալ-մամբ հետեցրել ե, թե արտադրության և սպառման միջև յեղած հակառությունը պետք ե սիստեմատիկորեն ավելցուկային արդյունք տա, և այդ սխալից բղխել ե այն, վոր նա Մարքսին մեղադրում ե անհետեսողականության մեջ։ Ընդհակառակը, Մարքսը մնում ե խիստ հետեղողական, յերբ ցույց ե տալիս

1) վոր արդյունքը կապիտալիստական հասարակության մեջ կարող ե իրացվել (պարզ ե, յեթե արդյունաբերության զանազան ճյուղերի միջև համամանականություն յենթադրվի)։ վոր այդ իրացումը բացատրելու համար սխալ կլիներ՝ ներառնել արտաքին առեւտուքը կամ «յերրորդ անձերի»։

2) վոր մանր-բուրժուական տնտեսազետների (ά լա Պուտոն) թեորիաները գերարծենք իրացնելու անհնարինության վերաբերյալ՝ հիմնվում են առհասարակ իրացման բուն պրոցեսը լիովին չհասկանալու վրա։

3) վոր նույնիսկ լիովին համամանական, իդեալապես հարթ իրացման դեպքում մենք չենք կարող կապիտալիզմը պատկերացնել առանց հակառության արտադրության և սպառման միջև, առանց նրա, վոր արտադրության հսկայական աճումը չհամատեղվի ժողովրդական սպառման չափազանց թույլ աճման (կամ նույնիսկ կանգառական և վատթարացման) հետ։ Իրացումը կատարվում ե ավելի շատ արտադրության միջոցների հաշվին, քան սպառման միջոցների հաշվին, — այդ պարզ հետեցվում ե Մարքսի սխալմաներից։ իսկ դրանից, իր հերթին, անխուսափելուն բղխում ե, վոր «ինչքան ավելի շատ

Ե զարգանում արտադրողական ուժը, այնքան ավելի շատ են նա հակասության մեջ մտնում այն նեղ հիմքի հետ, վորի վրա հանգչում են սպառման հարաբերությունները» (Մարքս): «Կապիտալի» այն բոլոր տեղերից, վոր նվիրված են արտադրության և սպառման միջև յեղած հակասության հարցին\*, պարզ յերկում են, վոր Մարքսը միայն այդ խմասով եւ հասկանում եր հակասությունը արտադրության և սպառման միջև:

Ի միջի այլոց, պ. Պ. Նեժդանովը կարծում են, թե ոլ. Տուգան-Բարանովսկին նույնպես ժըստում են արտադրության և սպառման միջև յեղած հակասությունը կապիտալիստական հասարակության մեջ: Յես չգիտեմ ճիշտ են արդյոք այդ: Պ. Տուգան-Բարանովսկին ինքն իր գրքում մի սխեմա յերեր վորը ցույց են տալիս արտադրության աճման հնարավորությունը սպառման կրճատման դեպքում (և այդ, իրոք, հնարավոր են կապիտալիզմի որով պատճում են): Միթե կարելի յե ժխտել վոր այստեղ մենք տեսնում ենք հակասություն արտադրության և

\* Այդ տեղերը բերված են «Научное обозрение»-ի 1899 թ. №1-ի իմ հոդվածում (տես ներկա գրքույկի էջ 3: Խմբ.) և կրկնված «Կապիտալիզմի զարգումը Ռուսաստանում»-ի առաջին գլխում, էջ 18—19 (տես Յերկերի III հատոր, էջ 31—32: Խմբ.).

սպառման միջև, թեպետ այստեղ ավելցուկային արդյունք չկա:

Մարքսին (և ինձ) անհետեղականության համար մեղադրելով, պ. Պ. Նեժդանովը բացի այդ աշխաթող ե արել վոր իր տեսակետը հիմնավորելու համար նա պետք ե վոր պարզեր, թե հապա ինչպես պետք ե հասկանալ արտադրության միջոցների արտադրության «անկախությունը» սպառման առարկաների արտադրությունից: Հստ Մարքսի, այդ «անկախությունը» սահմանափակվում են նրանով, վոր արտադրության միջոցները կազմող արդյունքի մի վորոշ (և մշտապես աճող) մասը իրացվում ե տվյալ ստորաբաժանման ներսի փոխանակություններով, այսինքն արտադրության միջոցները արտադրության միջոցների հետ փոխանակվով (կամ ստացված արդյունքն in natura\* նոր արտադրության հատկացներով). բայց արտադրության միջոցների պատրաստումը վերջին հաշվով անհրաժեշտաբար կապված են սպառման առարկաներ պատրաստելու հետ, վորովհետև արտադրության միջոցները պատրաստվում են վոչ թե իրենց իսկ արտադրության միջոցների համար, այլ սոսկնրա համար, վոր արդյունաբերության սպառման առարկաներ պատրաստող

\*—ընականում: Խմբ.:

ճյուղերի մեջ ավելի ու ավելի շատ արտադրության միջոցներ են պահանջվում\*, Այսպիսով, մանր-բուրժուական տնտեսագետների հայացքների տարբերությունը Մարքսի հայացքներից՝ այն չե, վոր առաջիններն առհասարակ ընդունում եյին արտադրության և սպառման միջնեղած կազը կապիտալիստական հասարակության մեջ, իսկ յերկրորդն առհասարակ ժխտում եր այդ կազը (այդ անհեթեթություն կիներ): Տարբերությունն այն ե, վոր մանր-բուրժուական տնտեսագետներն այդ կազը արտադրության և սպառման միջն համարում եյին անփիջական, կարծում եյին, թե արտադրությունն ընթանում է սպառման հետեվից: Իսկ Մարքսը ցույց տվեց, վոր այդ կազը միայն միջնորդական ե, վոր այն իրեն ցուցաբերում է միայն վերջին հաւընվ, վորովհետև կապիտալիստական հասարակության մեջ սպառումն ընթանում է արտադրության հետեվից: Բայց թեպետ և միջնորդական, այնուամենայնիվ կապիտալը սպառումը վերջին հաշվով պետք է ընթանա արտադրության հետեւից, և, յեթե արտա-

\* «Das Kapital», III, 1, 289: Յես մեջբերում արել եմ Հայությունը»-յում, եջ 40 (ներկա գրքույշի եջ 8: Խմբ.) և «Կապիտալիզմի զարգացման» մեջ, 17 (տես Յերկերի III հատոր, եջ 33: Խմբ.): Յեթե այդ հակառակությունը տաներ գեղի «սիստեմատիկ ավելցուկային արդյունք», ապա այն կնշանակեր հենց կապիտալիզմի անհնարինություն:

գրողական ուժերը խուժում են դեպի արտադրության աճում, իսկ սպառումը նեղացել է ժողովրդական մասսաների ոլորթարական վեճակով, ապա այստեղ հակառակությունն անկառած ե: Այդ հակառակությունը չի նշանակում կապիտալիզմի անհնարինություն\*, բայց այն նշանակում է բարձրագույն ձևի փոխարկվելու անհրաժեշտություն. ինչքան ավելի ուժեղանում է այդ հակառակությունը, այնքան ավելի զարգանում են թե այդ փոխարկման որյեկտիվ պայմանները և թե սուբյեկտիվ պայմանները, այսինքն հակառակության գիտակցումը աշխատավորների կողմից:

Այժմ հարց ե ծագում՝ ինչ գերք կրոներ պՆեժպանովը արտադրության միջոցների՝ սպառման միջոցներից «անկախ» լինելու հարցի վերաբերյալ: Յերկուսից մեկը՝ կամ նա կսկսի բոլորպին ժխտել վորևե կախում նրանց միջն կսկսի պնդել սպառման առարկաների հետ բու-

\* «Ետյուգներ», եջ 20 (II հ. եջ 25: Խմբ.). «Научное обозрение» №1, եջ 41 (ներկա գրքումի եջ 8: Խմբ.). «Կապիտալիզմի զարգացումը», եջ 19—20 (տես Յերկերի III հատոր, եջ 33: Խմբ.): Յեթե այդ հակառակությունը տաներ գեղի «սիստեմատիկ ավելցուկային արդյունք», ապա այն կնշանակեր հենց կապիտալիզմի անհնարինություն:

լորովին չկապվող, նույնիսկ «վերջին հաշվով» չկապվող՝ արտադրության միջոցների իրացման հնարավորությունը, —և այն ժամանակ նա անխոռուսավելիորեն կհանգի անհեթեթության, և կամ նա կընդունի, հետևելով Մարքսին, վոր արտադրության միջոցները վերջին հաշվով կապված են սպառման միջոցների հետ, —և այն ժամանակ նա պետք ե ընդունի, վոր յես ճիշտ եմ հասկանում Մարքսի թեորիան:

Մի որինակ կվերցնեմ, վորպեսզի, իբրև յեղակացության, արստրակտ դատողությունները լուսաբանեմ կոնկրետ տվյալներով։ Հայտնի յե, վոր յուրաքանչյուր կապիտալիստական հասարակության մեջ մեքենաներ գործածելուն հաճախ խանդարում ե չափազանց ցած աշխատավարձը (=ժողովրդական մասսաների սպառման ցած մակարդակը)։ Այդ քիչ եւ նույնիսկ այնպես և լինում, վոր ձեռնարկուների ձեռք բերած մեքենաները չեն դործում, վորովհետեւ բանվորական ձեռքերի գներն այն աստիճան ընկնում են, վոր գործատիրոջ համար ավելի շահավետ ե դառնում ձեռքի աշխատանքը\*։ Այս

\* Վերջին յերկույթի որինակը ուսուական կառիւտալիստական հողագործության բնագավառից յես ըեւ քիչ եմ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»-ի մեջ, եջ 165 (տես Յերկերի III հատոր, եջ 173, Խմբ.)։

դեպքում որվա լույսի պես պարզ ե սպառման և արտադրության միջև, կապիտալիզմի՝ արտադրության ուժերն անսահման զարգացնելու ձգտման և այդ ձգտումը ժողովրդի պրոլետարական վիճակով, չքավորությամբ ու գործազրկությամբ սահմանափակելու միջև յեղած հակասության առկայությունը։ Բայց պակաս պարզ չե, վոր այդ հակասությունից ճիշտ կլինի միմիայն այն հետևելությունն անել, վոր արտադրողական ուժերի զարգացումն իսկ անդիմագրելի ուժով պետք ե տանի դեպի կապիտալիզմի վոխարինումը համախմբված արտադրողների տնտեսությունով։ Ընդհակառակը, բոլորովին սխալ կլիներ՝ այդ հակասությունից այն հետևելությունն անել, թե կապիտալիզմը պետք ե սխստեմատիկորեն ավելցուկային արդյունք տա, այսինքն՝ թե կապիտալիզմն առհասարակ չի կարող իրացնել արդյունքը, ուստի և չի կարող վորուել առաջադեմ պատմական դեր խաղալ և այլն։

Քրիած և 1899 թ. մայիս—հունիսին։

Տպագրված և «ԺԱՌՆԵ»-ի № 19-աւմ,

1899 թ. դեկտեմբեր։

Ստորագրությունը՝ Վլադիմիր Իլյին։

Յեվ նման յերկույթները հատ-հատ դիպվածներ չեն, այլ կապիտալիստական հիմնական հատկությունների սովորական և անխռառավելի հետեանք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Դիտողություն շուկաների թեորիայի	
հարցի վերաբերյալ	3
Դարձյալ իրացման թեորիայի	
հարցի մասին	24
Պատասխան պ. Պ. Նեժդանովին	66

Տեք. խմբ. Ս. Խաչատրյան  
Կոմիտ. Արքադրիչ Ա. Թերգիկառյան  
Մրացրիչ Ա. Տ. Մկրտչյան  
Հարելու թվեց 15 ապրիլի 1934 թ.  
Տողել բարձրացրեց 29 մայիսի 1934 թ.

Համա. № 213, Խօնեց ПЛИ  
НП

Գլանվիր 7848(թ), Տիրած 5.000

Պատճեն № 113

Թոքք չափոր 5 x 8

4½ առ. քեր. (1 առ. քերում 41,000 առ. Յուն)

Կոմիտասի առաջնաժողով. Եղիպատ, Ալլավերդյան, 27  
Տех. հրատակութեան համար 27

Տех. հրատակութեան համար 27

Կոնտր. корректура В. Терзябашян

Կորректор А. Т.-Մկրտչյան

Сдано в набор 15 апреля 1934 г.

Подписано к печати 29 мая 1934 г.

Արմագան Պարտիզան  
Համար. № 213, Խօն. ПЛИ  
НП

Տիպոգրաֆия Партиздата ЦК КП(б)А  
Էրևան, սկ. Ալլավերդյան, № 27

«Ազգային գրադարան



NL0178857

ԳՐԱՅԻ 60 Կ.

5a

ЦЕНА 60 К.



В. И. ЛЕНИН

Статьи по вопросу  
о теории рынков



ПАРТИЗДАТ 1934 ԵՐԻՎԱՆ